

4/1/22

613.22
4-51



20 JUL 2010

197

ՀՐԱՏ. ԲԺ. Ա. ԲՈՒԳՈՒԳԱՆՆԻ

Հեղինակը անհայտ է:  
Առաջագրանմամբ:



# ԾՇԿԵՐ ԵՐԵՒՍԱՆ

ՆՐԱՆ ԿԵՐԱԿՐԵԼՆ  
ՈՒ  
ԽՆԱՄԵԼԸ

ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐ ՄԱՅՐԵՐԻՆ

Գին 1 20 կոպ.

~~613.2  
Բ-94~~

ՊԵՏԱՆԳՈՐԺ  
ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՊԱՐ. «ՍՈՒՔԻՍՏԵԱՆՑ ԵՒ ԼԻՍԷՆՍՈ»:

1910.

3-330/a

Արմ.  
3-330/a

ՀՐԱՏ. ԲՃ. Ա. ԲՈՒԳՈՒՂՆԵՐԻ:

Աս-484

613.22

4-51

9A

# ԾՇԿԵՐ ԵՐԵՒԱՆ

ՆՐԱՆ ԿԵՐԱԿՐԵԼՆ ՈՒ ԽՆԱՄԵԼԸ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԱՅՐԵՐԻՆ



ՀԱՅ. № 28427


ՊԵՏԱՏԻՊՈՐԱԿ  
ԵԼԷԲՏՐԱՇ. ՏՊԱՐ. «ՍՈՒՔԻԱՍԵԱՆՅ ԵՒ ԼԻՍԷՆԿՈ»:

1910.

hup

20.05.2013

45035-ահ.



29350-63

### Յ Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

«Մեր այս աշխատանքի նպատակն է մասշտիպ կերպով ծանօթացնել հասարակության լայն խաւերը ծծկեր երեխաներին կերակրելու եւ խնամելու կանոնների հետ:

Առողջ ու կենսունակ սերունդ ունենալու գլխաւոր պայմաններից առաջինը մենք համարում ենք երեխային մօր կարող կերակրելը:

Մենք անհրաժեշտ ենք գտնում մասնացոյց անել այն հանգամանքը, որ առողջ երեխան պէտք է զարգանայ բժրկական հսկողութեան ներքոյ, որովհետեւ աւելի հեշտ է նիւանդութիւնների առաջն առնելը, քան թէ բժշկելը:

Կարեւոր համարելով անպայման կռիւ մղել սարսափելի մանացութեան դէմ, որ սիրում է երեխաների մեջ Ռուսաստանում, մենք գրի առանք ներկայումս սցոյ առքիւ ձեռք առնուած միջոցները, առանձին ուշադրութիւն դարձնելով համապատասխան հասարակական նիւանդութիւնների վրայ:

Գիտակցելով որ մեր այս աշխատութիւնը գուրկ չի լինի պակասութիւններից, պարտաւորուած կլինենք, եթէ այդ մասին յայտնի մեզ:»

Բժիշկ մասնագէտներ Կիսելի եւ Մայգելի այս օգտակար ու հանրամատչելի գրքուկը հրատարակելով, յոյս ունինք, որ լայն կերպով կսարածւի ժողովրդի բոլոր խաւերում, որովհետեւ սիրող մայրերի համար անհրաժեշտ ձեռնարկ կարող է լինել:

1910 թ. ապրիլի 25-ին  
Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ:

ԲԺ. ԲՈՒԳՈՒՂԵԱՆ:

Երեխաների մահացութիւնը, պահանաւները եւ  
նրա դէմ կուսելու միջոցները:

Մեռնող երեխաների թիւը Ռուսաստանում  
շատ մեծ է և, համեմատելով միւս երկրներին հետ,  
նա այդ կողմից առաջին տեղն է բռնում:

Ռուսաստանում, տարւայ ընթացքում ծնւած  
երեխաների չորրորդ մասը մեռնում է մինչև մէկ  
տարեկան հասակը: Մեծ քաղաքներից, երեխա-  
ների մահացութեան ամենամեծ տոկոսը տալիս  
է Մոսկւան:

Երեխաները մեծ մասամբ մեռնում են ամառ-  
ւայ շոգերին ստամոքսի և աղիքների խանգա-  
րումներից (փրսխումն և փորհարութիւն):

Արդեօք ի՞նչն է երեխաների մահացութեան  
այդ ահագին թւի պատճառը, կհարցնեն ամենքը:

Վաղուց յայտնի է, որ այն երկրներում ուր  
ժողովուրդը հարուստ է և զարգացած, մեռնող  
երեխաների թիւը քիչ է:

Հաստատ կարելի է ասել, որ Ռուսաստա-  
նում երեխաների մահացութեան ահագին թւի  
պատճառը ժողովրդի աղքատութիւնն ու ազիտա-  
թիւնն է: Ներկայումս հաստատուած է, որ մեծ  
մասամբ մեռնում են ամենաչքաւոր դասակարգի  
երեխաները: Ունևոր ընտանիքներում մեռնող  
երեխաների թիւը անհամեմատ պակաս է: Մշտա-  
կան քաղցածութիւնից ժողովուրդը նւազում և  
հեշտ է ենթարկւում ամեն տեսակ հիւանդութիւն-  
ների: Թոյլ և ուժասպառ ժողովուրդը տալիս է  
նման սերունդ:

Կեղտոտութիւնը, որով յաճախ շրջապատւած է երեխան գիւղական ու քաղաքային կեանքում, շատ մեծ չարիք է հասցնում նրան: Ոչ պակաս վտանգաւոր է նաև այն, որ ժողովուրդը չգիտէ, թէ ինչն է երեխայի համար օգտակար և ինչը վնասակար:

Նախապաշարմունքը և դանազան սովորութիւնները շատ երեխաների մահւան պատճառ են դառնում: Ամենավտանգաւոր սովորութիւնը անմաքուր ծծակով (սօսկա) երեխային ծամած հաց, պաքսիմատ, տրորած գազար և աթերայ (կաշկա) տալն է:

Առանձնապէս վատ սնունդ են ստանում մանուկանց այն երեխաները, որոնց մայրերը հարկադրւած են աշխատանքի գնալ և հնարաւորութիւն չունեն իրենց կաթով կերակրել նրանց:

Թէև շատ անգամ ունեւորների երեխաներն ևս մեռնում են, որի գլխաւոր պատճառը նախ՝ արեւստական ձևով կերակրելն է և երկրորդ՝ երեխայի հետ վարւելու ձևը չգիտենալը:

Աւելի շատ մեռնում են օրինաւոր ամուսնութիւնից դուրս ծնւած երեխաները: Այգալիսի մայրը, շնորհիւ հասարակութեան ունեցած սխալ հայեացքների և պաշտպանող օրէնքի բացակայութեան, խայտառակւած է զգում իրեն: Աշխատելով ազատել երեխայից, յանձնում է նրան օտարին, որտեղ երեխան մուկու փոխարէն օրէցօր մօտենում է մահւան:

Անհրաժեշտ է բոլոր ուժով կռիւ մղել երեխաների մեծաքանակ մահացութեան դէմ, որովհետև դրանից ժողովուրդը աստիճանաբար թաւանում է:

Ներկայումս շատերը մեռնում են ջահիլ հա-

սակում: Այդ տխուր երևոյթը կվերանայ, երբ հասարակական ու նիւթական պայմաններն աւելի կլուսանան և ծծկեր երեխաներին կերակրելու և խնամելու անհրաժեշտ կանոնները չեն մոռացւի:

Երեխաների մահացութեան դէմ հարկաւոր է կուել և այն պատճառով, որ շատ ծնողների համար երեխայի կորուստը մեծ դժբաղտութիւն է. դրա հետ միասին կորչում է կեանքի իմաստն ու նպատակը: Չպէտք է մոռանալ, որ մեռնող երեխաներից շատերը կարող էին օգտակար, գուցէ և յայտնի անդամներ լինել հասարակութեան համար:

Մենք տեսնում ենք, որ մինչև անգամ Ռուսաստանում, չնայած նրա յետամնացութեան, երեխաների մահացութիւնն աստիճանաբար, թէև դանդաղ կերպով, պակասում է: Բայց դրանով չպէտք է բաւականալ:

Հետեւելով աւելի լուսաւորեալ երկրների օրինակին, մենք պարտական ենք անընդհատ յամատ կռիւ մղել երեխաների մահացութեան դէմ:

Կռիւր լինելու է պետական, հասարակական ու անհատական:

Պետականը կայանում է օրէնքներ հրատարակելում, որոնց նպատակը պէտք է լինի պաշտպանել մօր և ծծկեր երեխայի առողջութիւնը:

Այգալիսի օրէնք հրատարակեց 1877 թ. Շվեյցարիայում, որի համաձայն, գործարանի բանւոր կինը պէտք է հանգիստ ունենայ երկու շաբաթ ծնելուց առաջ և վեց շաբաթ ծնելուց յետոյ:

Նւրոպական շատ տէրութիւններ հետեւեցին այդ օրինակին:

Ֆրանսիայում, Ռուսէլի օրէնքով, իւրա-

քանչիւր ծիծ աւող մայր պարտաւոր է վկայագիր ներկայացնել, որ պատասխան է հետեւեալ հարցերի. «Կենդանի՞ է արդեօք երեխան. եթէ կենդանի է, 7 ամսական եղած է, թէ ոչ. նրան ծիծ աւող կիներ բաւարարութիւն տալի՞ս է արդեօք այդ դէպքում պահանջած պայմաններին»:

Հասարակական կուլի առաջին պայմաններից մէկը համարուում է ժողովրդի համար մատչելի դարձնել կանոնաւոր մանկաբարձական օգնութիւն ստանալը: Այդ նպատակով հասարակութիւնը հիմնում է ծննդաբերական տներ ու ապաստարաններ: Բացի դրանից, երեխաների համար կարևոր է հիմնել մսուրներ (եասլի), ուր մայրերը կարողանային աշխատանքի ժամանակ թողնել իրենց ծծկեր երեխաներին և ցերեկւայ ընթացքում դալ նոցա ծիծ տալու: Արտասահմանում երեխայոց ապաստարանները շատ են տարածւած Օր.՝ Փարիզում կան 120 այդպիսի հիմնարկութիւններ, որոնք մեծ մասամբ գտնվում են գործարաններից ոչ հեռու:

Ռուսաստանում երեխայոց ապաստարաններ սկսեցին բացւել 1864 թ. և ներկայումս բաւական տարածւած են: Շատ գեմսուօներ հիմնեցին այդպիսի հիմնարկութիւններ և հետեւանքից դո՛ւ են:

Ոչ պակաս նշանակութիւն ունի նաև չքաւոր ծիծ աւող մայրերին նպաստ տալը և կամ կաթ մատակարարելը նրանց, որոնց կաթը անբաւարար քանակութեամբ է արտադրւում: Եւրոպական բոլոր երկրներում կան այդպիսի հիմնարկութիւններ և կրում են «կաթի կաթիլներ» անունը: Ֆրանսիայում բացի դրանից գոյութիւն ունի 40 ընկերութիւն, որոնք չունենոր ծիծ աւող մայրերին գրամական օժանդակութիւն հասցնելուց

գատ, տալիս են նաև բոլոր կարևոր իրեղէնները, որ հակաւոր են նորածիններին խնամելու համար:

Երեխաները առանձին հոգատարութիւն ու խնամք են վայելում Ամերիկայում: Այնտեղ այդ գործի համար ոչ մի միջոց չեն խնայում: Ընկեցիկ երեխաների համար հիմնած նոցա ապաստարաններն օրինակելի են, ուր երեխաներից շատ քչերն են մեռնում:

Մեզ մօտ չքաւոր ընտանիքների երեխաներին թաւրմ ու լաւ կաթ մատակարարող ընկերութիւնները նոր են զարգանում և մենք այդպիսի հիմնարկութիւններ ունենք Կիեւում, Սարատովում, Պետերբուրգում և Պարկովում:

Անհրաժեշտ է երեխային կերակրելու և խնամելու մասին մատչելի և ճիշտ գաղափարներ տարածել ժողովրդի մէջ: Այդ նպատակով հարկաւոր է մայրերի և դայեակների համար դասընթացներ հիմնել, հրոպարակական դասախօսութիւններ կարգալ և հրատարակել օգտաւէտ ու հանրամատչելի գրքոյկներ ու թերթիկներ:

Ամենքը պէտք է գիտենան, որ բժշկին հարկաւոր է գիմել ոչ միայն հիւանդութեան ժամանակ, այլ և առողջ երեխան պէտք է բժշկական հսկողութեան տակ լինի, կանոնաւոր սնւելու և զարգանալու համար:

Մոսկւայի քաղաքային ծննդաբերական տներից մէկում 1909 թ. իբրև փորձ սկսեցին խորհուրդներ տալ մայրերին երեխաներ կերակրելու և խնամելու մասին: Փորձը յաջող էր և շատ մայրեր պարբերաբար բերում են իրենց առողջ երեխաներին, յետագայի վերաբերմամբ կորհուրդներ ստանալու:

Արևմտեան Եւրոպայի միքանի քաղաքներում

այդպիսի հիմնարկութիւնները միքանի տարուց ի վեր աջողութեամբ գործում են և մեծ օգուտ են բերում ժողովրդին:

Վերևում մեր բոլոր ասածներն իրագործելու համար կազմում են միութիւններ եւ ընկերութիւններ, երեխաների մահացութեան դէմ կուելու նպատակով:

Քաղաքների եւ գիւղերի առողջապահական պայմանների, կառավարչական միջոցներով բարելաւելը մեծ նշանակութիւն ունի երեխաների մահացութեան դէմ կուելու համար, բայց մենք հնարաւորութիւն չունենք այս գրքոյկի մէջ այդ հարցերը շօշափելու:

Իւրաքանչիւր ընտանիք ևս հոգ տանելով երեխաներին կանոնաւոր կերակրելու և խնամելու մասին, մեծ ազդեցութիւն կարող է ունենալ մահացութեան պակասելու վրայ:

Յաճախ, բոլորովին առողջ ու բարեյաջող պայմաններում ապրող ծնողների երեխաները մեռնում են այն պատճառով, որ ծնողներն անտեղեակ են երեխաներին կերակրելու և խնամելու կանոններին:

Որչափ մեծ վնաս են հասցնում վտանգաւոր նախապաշարմունքներով լի գանազան կամաւոր խորհրդատուները, որոնք իրենց գիտակ են համարում միայն նրա համար, որ միքանի երեխաներ իրենց ձեռքի տակովն են անցել և որոնցից շատերը մեռել են այն խորհրդատուների տգիտութեան ու անհոգութեան շնորհիւ:

Չափի և առողջ ծնողների առաջին երեխաները ծնւում են առողջ և նրանց կեանքը պահպանելը աւելի հեշտ է: Մինչդեռ ծնողները միքանի երեխայ կորցնելուց յետոյ միայն աւելի հոգատար

են դառնում վերջինների վերաբերմամբ, որոնք աւելի թոյլ և հիւանդոտ են, մօր առողջութիւնը և ոյժերը յաճախակի ծնելուց զգալի կերպով քայքայւած լինելու պատճառով: Շատ անգամ տեսնում ենք, որ կինը ծնել է 8—10 երեխայ, որոնցից կենդանի են մնացել 1—2-ը: Երեխայի ծնւելը լուրջ պարտականութիւն է դնում մօր վրայ և վերջինս պէտք է իր ամբողջ գոյութեամբ անձնատուր լինի պարտականութիւններին: Իրժբաղաբար ոյժերից վեր աշխատանքը մի կտոր հացի համար, զրկում է երեխային մօր կաթից ու խնամքից: Միւս կողմից, ունևոր ընտանիքները ցանկանալով անհոգ ու թեթև կեանք վարել, իրենց երեխաներին յանձնում են օտար վարձկան ծծմայրերի ու դայեակների:

Պէտք է ամեն կերպ աշխատել որ երեխաները իրենց մօր կաթով կերակրւեն: Միլիոնաւոր կեանքեր փրկւած կը լինեն!

Յոյ կիկն ու իր կեանքը:

Առողջ երեխայ կարող է ծնւել, եթէ իրենք, ծնողներն առողջ են և յղութեան ընթացքը կանոնաւոր է: Յետնորդների վրայ վնասակար ազդեցութիւն են ունենում սիֆիլիս ու թոքախտբարակացաւը: Վատ ազդեցութիւն են ունենում նաև նեարդային ու հոգեկան հիւանդութիւնները: Հարբեցողների մեծամասնութիւնը թոյլ և հիւանդոտ երեխաներ է ունենում: Անհետևանք չէ անցնում և ծնողների նոյնիսկ մի անգամ հարբելը բեղմնաւորման ընթացին, որ շատ վնասակար ազդեցութիւն է ունենում երեխաների առողջութեան վրայ:

Շատ նպատակայարմար կլինէր, եթէ ամուսնացողները համար պարտադիր լինէր առողջութեան վկայագիր ներկայացնելը, որ գոյութիւն ունի հայերի մէջ\*):

Որովհետեւ երեխան ապրելով մօր արգանդում մնում է նրա արիւնով, յղի կնոջ առողջութեան վրայ առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել: Նա շատ լաւ մտունդ պէտք է ստանայ, որպէսզի կարողանայ զարգացնել իր և երեխայի ոյժերը: Կերակուրը պէտք է սննդաբար լինի, բայց ոչ դժուարամարս: Յղի կինը երբեմն խիստ ցանկութիւն է ունենում ուտել այս կամ այն կերակուրը: Այդ ցանկութիւնը կարելի է կատարել, եթէ կերակրի մէջ փաստակար նիւթեր չկան:

Յղի կանայք ոգելից խմիչքներ չպէտք է գործածեն, որպէսզի արգանդում ապրող երեխայի կանոնաւոր դարգացումը չ'արգելի:

Յղի կանանց անհրաժեշտ է հեռու պահել ծանր եւ իրենց ոյժից վեր աշխատանքներից: Այս տեսակէտից զիւղական ու գործարանական բանւոր յղի կանայք շատ անբարեյաջող պայմաններում են գտնուում: Նրանք ծանր աշխատանքի ազդեցութեան տակ յաճախ վիժում են և կամ թոյլ երեխայ ծնում: Փարիզում տեղի ունեցած նորածիններին կշռելը ցոյց տւեց, որ աւելի մեծ քաշ ունենում են այն երեխաները, որոնց մայրերը յղիութեան վերջին ժամանակները չեն աշխատել: Այդ էր պատճառը, որ շատ երկրներում օրէնք հրատարակեց, որի հիման

\*) Առանձին հաճոյքով բերելով այս խօսքերը, անշափ ուրախ ենք, որ այդ մասին տարածել է ուսու ժողովրդի մէջ: Հարց է վերոյիշեալ վկայականը ներկայացնելը սուրբ պարտականութիւն է մեզ համար, թէ մեղանշում ենք այդ բանի դէմ: Զմոռանանք որ այդպիսի վկայական ներկայացնելը ամուսինների բազմաթիւութեան ամենապիտանւոր պայմանն է:

վրայ բանւոր ծննդական կանայք չեն աշխատում 2 շաբաթ նախ քան ծնելը և 4—6 շաբաթ՝ ծնելուց յետոյ:

Գերմանիայում, յղի բանւոր կանայք ստանում են իբրեւ նպաստ իրենց աշխատավարձի կէսը, շնորհիւ բանւորների պարտադիր ապահովագրութեան:

Յղի կնոջ շրջապատը վերին աստիճանի մաքուր պէտք է լինի: Նա պէտք է լողանայ մանաւանդ յղիութեան երկրորդ կիսում, շաբաթական 2—3 անգամ: Առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել սեռական գործարանների վրայ:

Սլոմոյ հագուստը, որ արգելում է կանոնաւոր շնչառութիւնն ու արեան շրջանառութիւնը, փաստակար է: Զպէտք է գործածել սեղմիրան (կօրսէտ) և զանազան կապիչներ, որ սեղմում են փորը կամ ոտքերը եւ նպաստում առողջներ առաջացնելուն: Յղի կանանց համար օգտակար է թեթեւ ու չյօգնեցնող աշխատանքը եւ բաւարար ժամանակ բաց օդում գտնւելը:

Անհրաժեշտ է յղի կնոջ հոգեկան հանգստութիւնը պահպանելու համար, հեռու պահել նրան ամեն տեսակ յուզմունքներից: Յաճախ յղի կանայք քմահաճ, դիւրաբորբօք և առանձնապէս դիւրազգաց են լինում: Այս բոլորի վրայ պէտք է ուշադրութիւն դարձնել և մտածւած կերպով ու որոշ չափով կատարել նրանց պահանջները:

Զնայած կանոնաւոր սննդառութեան ու կեանքի լաւ ընթացքին, համարեա միշտ փորկապութիւն է պատահում և պէտք է լինում օքնայի (կլիզմա) օգնութեան դիմել:

Եթէ յղի կնոջ սեռական գործարանը ունի լեարեա (բէլի) կոչւած հիւանդութիւնը, անպատճառ պէտք է բժշկւի, որովհետեւ հակառակ դէպ-

քում երեխայի աչքերը ծանր կերպով կարող են փնասել:

Ապագայ երեխային կանոնաւոր ծիծ տալու նպատակով, դեռ ևս յղի ժամանակ պէտք է հոգ տանել ստինքների պտուկների ամրապնդման մասին: Յղիութեան երկրորդ կիսից սկսած, պտուկները պէտք է լւանալ սպիրտախառն ջրով և կամ օղիով:

Ներկայումս, յղի կանանց տրուող օգնութեան գլխաւոր պակասութիւնը նրանումն է, որ ծննդաբերական աներում և ապաստարաններում ընդունում են վերջին րոպէում, մինչդեռ նրանցից շատերը ծնելուց դեռ բաւական ժամանակ առաջ, կարիք ունեն կանոնաւոր խնամատարութեան և լաւ սպրուստի:

### Նորածինը եւ նրան խնամելը.

Առողջ երեխան երբ աշխարհ գալու միջոցին բաւական ուժեղ ճիչ է արձակում, դա նշան է, որ նա մօր մարմնի հետ այլևս կապւած չէ և սկսել է ինքնուրոյն ապրել: Եթէ նորածնի ճիչը թոյլ է, մեծ մասամբ նշանակում է, որ երեխան ևս թոյլ է: Ճշիբացակայութիւնը նշան է, որ երեխան չի շնչում: Վերջին դէպքում բժիշկը կամ մանկաբարձուհին գործադրում են արհեստական շնչառութիւն:

Առաջին հոգսը դէպի նորածինը այն է, որ նրա փորից 6—8 սանտիմետր հեռաւորութեան վրայ պորտապարանը մաքուր ու ամուր թելով կապում են երկու տեղում, որոնք միմիանցից 2 սանտիմ. հեռու պէտք է լինեն և յետոյ այդ երկու կապերի մէջ եղած տարածութեան մէջ տեղից կարում: 4—6 օրից յետոյ մնացորդը չո-

րանում ու պոկւում է: Որպէսզի վարակիչ թոյնը չկարողանայ ներս մտնել, այն տեղը որից պորտը պոկւել է պորտապարանի մնացորդը, պէտք է երկու շաբաթ շարունակ խիստ մաքուր կապով պաշտպանւած լինի: Ամեն անգամ երեխային լողացնելուց յետոյ այդ կապը պէտք է փոխել:

Վերջերս, միքանիսը վախենալով վարակումից, խորհուրդ են տալիս նորածնին չլողացնել մինչև պորտապարանի պոկւած տեղի (պորտի) կատարելապէս առողջանալը:

Վարակումից խուսափելը հեշտ է, եթէ լողացնելու համար գործածւող ջուրը եռ եկած է և երեխայի շուրջը խիստ մաքրութիւն է տիրում:

Երբ երեխայի պորտը մաքուր է պահւում, երեխաների մեծ մասը ազատւում է հիւանդանալուց ու մեռնելուց: Ծննդաբերական աներում, կանոնաւոր խնամքը պորտի վերաբերմամբ, զգալի կերպով պակասեցրեց երեխայոց մահացութիւնը:

Նորածինը աշխարհ եկած րոպէին ծածկւած է լինում ճարպային շերտով: Այդ շերտը հեշտ կերպով հեռացնելու համար երեխայի ամբողջ մարմնի վրայ քսում են որ և է իւր կամ ձւի դեղնուց, որից յետոյ լողացնում են տաք ջրով (ըստ Բէօմիւրի 28<sup>0</sup>/<sub>10</sub>) ու օձառով: Զերտը անյայտանալուց յետոյ երեխայի մարմինը կարմիր գոյն է ստանում, որ սովորական երևոյթ է և 1—2 օրից յետոյ անցնում է: Քիչ չէ պատահում, որ կարմրութիւնը անցնելուց յետոյ երեխայի մարմնի կաշին ճաքճաքում է (mealymentic):

Հիւանդութիւնների առաջն առնելու նպատակով նորածնի աչքերի ու քթի մէջ կաթեցնում են լեսապիսի 2<sup>0</sup>/<sub>10</sub> և կամ կիտրոնի թթւութի 1<sup>0</sup>/<sub>10</sub> լուծոյթի մի քանի կաթիլներ:

Սովորաբար, լողանալուց յետոյ երեխան ու մայրը քնում են (երեխային պէտք է տեղաւորել առանձին մահճակալի վրայ): Քունը տևում է մի քանի ժամ և երբ երեխան դարձնում է, մայրը առաջին անգամ ծիծ է տալիս նրան: Ծիծ տալու համար մայրը անպայման պէտք է միքիչ գէպի կողք թեքւի, մօտեցնի երեխային իր կրծքին ու ստինքի պտուկը դնի նրա բերանը: Երեխաներին նախ քան ծիծ տալը սովորաբար շաքարաշուր են տալիս, որպէսզի քաղցած չմնան: Այդ բանը չըպէտք է անել, որովհետև երեխաները ծնելուց յետոյ առաջին ժամերի ընթացքում կերակրի մեծ պահանջ չեն զգում: Առաջին 24 ժամուայ ընթացքում մայրերի կաթը սկսում է երևան գալ:

Ծնելուց յետոյ առաջին օրերի ընթացքում արտադրւած մօր կաթը իր բաղադրութեամբ տարբերւում է սովորական կաթից և կոչվում է «գալ»: Դալը ունենալով լուծող յատկութիւն, առաջ է բերում երեխայի առաջին կղկղունքը, ազատելով աղիքներն այն բոլորից, որ նրանց մէջ հաւաքւել էր արգանդային կեանքի ընթացքում:

Իր ժամանակին ծնւած երեխայի քաշը սովորաբար  $7\frac{1}{2}$ —8 գրվ. է, երկարութիւնը 50, կրծքի շրջագիծը 31—33, իսկ գլխի շրջագիծը 34—35 սանտիմետր: Կանոնաւոր դարգացած երեխայի գլխի շրջագիծը կրծքի շրջագիծից 2—3 սանտ. աւելի է:

Առաջին օրերում նորածնի քաշը պակասում է մօտաւորապէս  $\frac{1}{2}$  գրվ., որը գլխաւորապէս երեխայի կաշւի մակերեսից ջրի գոլորշիանալու հետևանքն է: Հետևեալ օրերում երեխան սկսում է հետգհետէ լցւել և երկու շաբաթից յետոյ սկըզբնական քաշին է հասնում:

Նորածնի շնչառութիւնը վայր ի վերոյ է և յաճախակի, քնած ժամանակ մի րոպէում հասնում է 35-ի, իսկ արթուն ժամանակ՝ 50-ի (մեծերինը 20—24): Նորածնի ջերմութեան աստիճանը (տեմպերատուրա) տատանւում է 26,3<sup>0</sup>—37,5<sup>0</sup>-ի մէջ: Նրա սիրտը մի րոպէում զարկում է 140 անգամ (մեծերինը 70—80): Երեխան սկսում է միգել առաջին կամ երկրորդ օրը: Սկզբներում մէզը պղտոր է լինում, որովհետև շատ աղեր է պարունակում իր մէջ: Այդ երևոյթը բոլորովին անվտանգ է: Մօտաւորապէս 10-րդ օրը մէզը պարզւում է և ընդունում իր սովորական բնաւորութիւնը:

Նորածինների առանձնայատկութիւններից մէկն է նրանց թուլութիւնը, որ խնամելու ժամանակ միշտ պէտք է աչքի առաջ ունենալ:

Նորածին անասունները նոյնպէս աչքի են ընկնում իրենց թուլութեամբ. բաւական է կորցնեն իրենց քաշի  $\frac{1}{3}$  մասը, որ ոչնչանան:

Երեխան մօր արգանդում զգում է 37,5<sup>0</sup> ջերմութիւն, իսկ ծնւելուց յետոյ ընկնում է աւելի պակաս ջերմութեան մէջ: Որովհետև նորածինը վերին աստիճանի զգայուն է ջերմութեան փոփոխութեան վերաբերմամբ, դրա համար էլ պէտք է միջոցներ ձեռք առնել, որպէսզինա չսառչի: Երեխային մերկ չպէտք է թողնել և երբ ձեռքերն ու ոտքերը սառն են, հարկաւոր է փաթաթել բամբակի մէջ: Լողացնելուց առաջ և յետոյ չի կարելի երեխային երկար ժամանակ մերկ թողնել:

Վերոյիշեալ զէպքում հարկաւոր է առանձին ուշադրութիւն դարձնել օրպակաս երեխաների վրայ. նրանց պէտք է փաթաթել բամբակի, մորթու մէջ և կամ տեղաւորել որոշ ապարատում, մշտական տաք պահելու նպատակով: Յաճախ,

2950-63



ծնւելուց յետոյ երեխան դեղնում է: Այդ երևոյթը կոչում է նորածինների դեղնախտ (դեղնութիւն): Մեծ մասամբ այդ հիւանդութիւնը վտանգաւոր չէ և միքանի օրից յետոյ անցնում է, եթէ երեխան ընդհանրապէս առողջ է: Հակառակ դէպքում անպատճառ հարկաւոր է բժշկի դիմել:

Անխաս հիւանդութիւն է նաև երեխայի ծիծիկները ուռչելը, որ միքանի օրից յետոյ ինքն իրեն անցնում է: Շատ հազազիւտ դէպքերում գործը հասնում է թարախակալութեան:

Անթերի, խիստ մաքրութիւնը օրէնք է երեխային խնամելու ժամանակ:

Երեխայ խնամողների ձեռները միշտ շատ մաքուր պէտք է լւացւած լինին օճառով:

### Երեխային կերակրելը.

*Միայն մօր կաթն է պարունակում իր մէջ այն անհրաժեշտ նիւթերը, որոնք կարեւոր են երեխայի անդառութեան և կանոնաւոր զարգացման համար:*

Ծիծ տալը, նրա նւաճակութիւնը մօր ու երեխայի համար.

Երեխայի ամենալաւ կերակուրն է մայրական կաթը, որ պարունակում է իր մէջ այն անհրաժեշտ նիւթը, ինչ պահանջւում է երեխայի անդառութեան ու կանոնաւոր զարգացման համար: Փաստ է, որ մայրական կաթը ոչնչով չի կարելի փոխարինել և որ մօր կաթով կերակրող երեխաներից շատ քչերն են մեռնում: Յաւալի է, որ երեխաների մեծ մասը զրկւում է մայրական կաթից, մօր աշխատանքի գնալու և կամ այդ բանին նշանակութիւն չտալու պատճառով:

Ծիծ տալը մեծ նշանակութիւն ունի ոչ միայն երեխայի, այլև մօր համար: Ծիծ տւող կանանց ծնելուն հետևող ժամանակաշրջանը անցնում է աւելի արագ և բարեյաջող: Ծիծ չտւող մայրը աւելի ընդունակ է նորից յղիանալու, իսկ յաճախ ծնելը ուժասպառ անելով կնոջը, նպաստում է թոյլ և օրպակաս երեխաների աշխարհ գալուն ու վիժումներին:

Կար՞ող եւ ծիծ տալ արդեօք սակաւարիւն ու թոյլ կանայք.

Յաճախ լսում ենք մայրերից, որ նրանք չեն կարողանում ծիծ տալ սակաւարիւնութեան, կաթի բացակայութեան ու ընդհանուր թուլութեան պատճառով: Դիտողութիւնը ցոյց է տւել, որ այդ

կանանց մեծամասնութիւնը յաջող կերպով կարող էր ծիծ տալ պէտք եղած ժամանակի ընթացքում, իսկ միքանիսը՝ գոնէ առաջին ամիսները, որ նոյնպէս մեծ նշանակութիւն ունի երեխայի առողջութեան ու կեանքի համար:

Փորձած, մասնագէտ բժշկներից շատերը հաստատում են, որ մայրերի 90<sup>0</sup>/<sub>10</sub>-ից աւելին ընդունակ է ծիծ տալու: Մայրերից միքանիսը ծիծ տալուց խուսափում են, զուր տեղը կարծելով որ կազատեն նեղութիւնից: Չպէտք է մոռանալ, որ ծիծ չտալուց ևս առաջ են գալիս նոր հոգսեր, մանաւանդ երեխայի մարսողութիւնը խանգարելու դէպքում, որ սովորական երեւոյթ է արհեստական ձևով կերակրելու ժամանակ: Բացի դրանից մայրերը զրկում են շատ բաւականութիւններից, որոնք կապած են ծիծ տալու հետ:

Շատ-շատերը կարծում են որ սակաւարին կանայք ծիծ տալուց թուլանում են, մինչդեռ Բերլինի հիւանդանոցներից մէկում (ամբուլատորիա) թոյլ մայրերին կշռելը հաստատել է, որ ծիծ տալը ոչ թէ թուլացնում, այլ աւելի շուտ առաջացնում է քաշի աւելանալը:

Միւս կողմից տեսնում ենք որ գունատ ու թոյլ մայրերը, որոնց ծիծ տալու ընդունակութեան մասին կարելի էր կասկածել, երբ ծիծ են տալիս իրանց երեխաներին, իրենց լաւ են զգում, շուտով կազդուրւում և առողջ էլ որդիք են մեծացնում: Յաճախ հակաճառում են որ մօր կաթը քիչ է և չի բաւականանում երեխային:

Այդպիսի խօսքերին մեծ զգուշութեամբ պէտք է վերաբերել:

Եթէ մայրը ծնելուց յետոյ սկզբներում կաթ չի ունենում, պէտք է աչքի առաջ ունենալ, որ

երբեմն, մանաւանդ առաջին անգամ ծնող կնոջ կաթի քանակութիւնը շատ չնչին է լինում, բայց յետոյ սկսում է շատանալ: Այս բանը գիտենալը գործնական մեծ նշանակութիւն ունի, որովհետև մայրերից միքանիսը հրաժարւում են ծիծ տալուց, կարծելով որ կաթ չունին: Չնայեա՞ծ կաթի կարծուող բացակայութեան, որոշ ժամերին պէտք է երեխային ծիծ տալ: Շատ անգամ կաթ չի արտադրւում այն պատճառով, որ ջահիլ, առաջին անգամ ծնող մայրերը խիստ յուզւում են, կարծելով որ իրենց կաթը չի բաւականանալ երեխային. հանգիստ եղած ժամանակ նրանք կարգին ծիծ են տալիս:

Ամեն մայր պէտք է գիտենայ, որ ծնելուց յետոյ շատ հազւագիւտ դէպքերում միայն կինը կարող է կաթ չունենալ: Կարևոր է յիշել, որ նորածինը սկզբներում քիչ կաթի պահանջ է գզում և եթէ մօր կաթի քանակութիւնը շատ չէ, այնուամենայնիւ առաջին շաբաթները կբաւականացնի նրան: Մօր կաթի քանակութիւնն իմանալու նպատակով ստինքը կթելը կամ ուրիշ միջոցով կաթը դուրս բերելը համոզեցողիչ չէ, որովհետև երեխայի ծծածը աւելի շատ է: Սովորաբար երեխայի արտաքինն ու տեսքը և քաշի պարբերաբար աւելանալը զբաւական է որ մօր կաթի քանակութիւնը բաւարար է: Որպէսպի վերջնականապէս որոշելի կաթի քանակութեան վերաբերեալ հարցը, պէտք է երեխային կշռել ծիծ տալուց առաջ և յետոյ: Քաշի տարբերութիւնը ճիշտ կերպով ցոյց կտայ ծծած կաթի քանակութիւնը:

Սովորաբար առողջ երեխան 24 ժամայ ընթացքում ծծում է՝

1-ին շաբաթւայ վերջը	.	250	գրամ.
2-րդ	»	500	»

3-րդ	»	»	.	550	»
4-րդ	»	»	.	600	»
8-րդ	»	»	.	800	»
12-րդ	»	»	.	850	»
16-րդ	»	»	.	860	»
20-րդ	»	»	.	930	»
24-րդ	»	»	.	1000	»

Կաթի անբաւարար քանակութիւն կարող է առաջ գալ նաև այն դէպքում, երբ երեխան վատ է ծնում ու քիչ է գրգռում ստինքը: Ժամանակի ընթացքում ամբասնդւելով, երեխան կսկսի աւելի ուժեղ ծծել և կաթի քանակն էլ կմեծանայ:

Երբ մօր կաթը իսկապէս անբաւարար քանակութեամբ է արտադրւում, բացի ծիծ տալուց երեխային ուսեցնում են նաև կովի կաթ:

Մայրը ծիծ տալուց կարող է հրաժարւել միայն այն դէպքում, երբ բոլոր միջոցները ձեռք սանելուց յետոյ ևս արտադրւած կաթի քանակութիւնը շատ չնչին է կամ բոլորովին չկայ:

Որքան էլ վատ թւայ մօր կաթը, այնուամենայնիւ երեխան դրանով պէտք է կերակրւի:

Այս բանը կարելի է օրէնք համարել:

Ծիծ տալը յղութեան ժամանակ:

Երբ կինը յղի է, ցանկալի է որ չշարունակէ ծիծ տալ: Այս հարցը վճռելու ժամանակ ամեն մի առանձին դէպքում անհրաժեշտ է ի նկատի առնել նաև ծծկեր երեխայի շահերը: Եթէ յղի կինը կատարելապէս լաւ է գգում իրեն, ծիծ տալը կարող է շարունակել 4—8 շաբաթ ևս նախ՝ եթէ երեխան փոքր է (2—3 ամսական) և երկրորդ՝ երբ ծծից կտրելու ժամանակը ամառուայ ամիսներին է լինում:

Մայրը, ամսականի (րեգուլը) ժամանակ ծիծ տալը չպէտք է դադարեցնի, որովհետև երեխան դրանից չի վնասւում:

Ո՞ր դէպքերում մայրը կարող է հրաժարւել ծիծ տալուց.

Վերն ասացինք, որ մայրը շատ հազւագիւտ դէպքերում կարող է հրաժարւել իր երեխային ծիծ տալուց: Այդ դէպքերից առաջինը պէտք է համարել կնոջ ծանր հիւանդութիւնը, որը քայքայել է նրա ոյժերը:

Վարակիչ հիւանդութեամբ տառապող մայրը ծիծ տալը կարող է շարունակել, եթէ իր մէջ գգում է բաւական ոյժ, կաթի քանակութիւնը բաւարար է և կարելի է սպասել, որ հիւանդութիւնը շուտով կանցնի:

Երբ մայրը տառապում է վարակիչ ծանր հիւանդութեամբ և ծիծ է տալիս երեխային, վերջինս կարող է վարակւել:

Մայրը, որ ծնել է սիֆիլիսով հիւանդ երեխայ, անպատճառ ինքը պէտք է ծիծ տայ նրան նոյնիսկ այն դէպքերում, երբ իր վրայ յիշեալ հիւանդութեան և ոչ մի նշան չի երևում: Նա այս դէպքում չի վարակւում և սպասով կարող է շարունակել ծիծ տալը: Իսկ եթէ այդպիսի երեխային ծիծ տայ օտար, առողջ կին, մեծ վտանգ է սպառնում վերջինիս. նա կարող է վարակւել: Նոյնպէս և սիֆիլիսով հիւանդ մայրը, որ ծնել է առողջ երեխայ, ծիծ տալը պէտք է շարունակէ բացի այն դէպքերից, երբ նա վարակւել է երեխային ծնելուց յետոյ և կամ յղութեան վերջին ամիսների ընթացքում:

Ծիծ տալուն արգելք կարող են լինել ստինք-  
ների ներս ընկած փոքրիկ պտուկները, որոնց  
երեխան անկարող է բերանով բռնել: Բաւական  
մեծ նշանակութիւն ունեցող արգելքներ են նաև  
ստինքների ճեղքւածքները, որ աչքի են ընկնում  
իրենց հիւանդութեամբ և երբեմն դրանց թիւը  
այնքան է շատանում, որ մայրը վերջ ի վերջոյ  
գրկուում է երեխային ծիծ տալու հնարաւորու-  
թիւնից: Բացի դրանից պատահում է ստինքների  
պտուկների առչիւր, որ թարախակալելուց յետոյ  
նոյնպէս արգելք է դառնում ծիծ տալուն: Ծծից  
կտրելու պատճառ կարող են լինել երեխայի պա-  
կասութիւնները օր.՝ շրթնահերձութիւն (заячья  
губа, волчья пасть:) և այլն: Այս դէպքերում  
անհրաժեշտ է արհեստական ձևով և կամ կթած  
մայրական կաթով կերակրել:

Յամենայն դէպս, վաղաժամ ծծից կտրելը  
շատ լուրջ հանգամանք է և երբեմն կապուած է  
երեխայի կեանքի հետ: Ծծից կտրելու հարցը  
որոշելը պէտք է միմիայն բժշկին թողնել:

Շատ յաճախ, մայրերը դիմում են բժշկին  
ու խնդրում, որ կտրէ երեխայի լեզւի տակը,  
ասելով. «վատ է ծծում, լեզւով կափկափում է»  
(щелкать):

Այս հայեացքը մոլորութեան հետևանք է, որ  
կարծում է թէ լեզւի կապը կարճ է: Հազւագէտ  
է, որ լեզւի կապը իսկապէս կարճ է լինում, բայց  
նա սովորաբար ձգւում-երկարում է և այդպիսի  
դէպքերում օպերացիան բոլորովին անօգուտ է:

Յաճախ երեխան վատ է ծծում քիթը բռն-  
ւած լինելու պատճառով (հարբուխ), որի վրայ  
հարկ եղած ուշադրութիւնը պէտք է դարձնել:

Երեխայի ճշարն ու յաճախակի լուծելը պատ-  
ճառ չի կարող լինել ծծից կտրելուն, եթէ քաշի

աւելանալն ու ընդհանուր զարգացումը կանոնա-  
ւոր է: Երեխաներից շատերը առաջին 3—4 ամ-  
սւայ ընթացքում տառապում են նման խանգա-  
րումներով (ճշալ, լուծել), որ արգելք չի հանդի-  
սանում նրանց կանոնաւոր զարգացման ու առ-  
ողջութեան: Այս բոլոր խանգարումները կարող  
են առաջ գալ զանազան պատճառներից, որ շատ  
դէպքերում վերին աստիճանի դժւար է գտնել:

Յանախակի ծիծ սալը.

Յաճախակի ծիծ տալը կախւած է երեխայի  
հասակից: Առաջին ամսւայ ընթացքում նրան  
ծիծ պէտք է տալ 2—2½ ժամը մի անգամ,  
երկրորդ ամսւանից սկսած 3 ժամը և վեցերորդ  
ամսւանից՝ 3½—4 ժամը մի անգամ:

Այս ժամանակամիջոցները սահմանւած են  
նրա համար, որպէսզի երեխայի ծծած կաթը  
մարսւի և անցնի աղիքները:

Երբ երեխան քնած է, հարկ չկայ նրան զար-  
թեցնել ծիծ տալու նպատակով, աւելի լաւ է  
սպասել մինչև նրա արթնանալը, որովհետև քու-  
նը նրան ամրապնդում է և բացի դրանից քաղ-  
ցած երեխան աւելի լաւ է ծծում:

Ծիծ սալը գիշերւայ ընթացքում.

Հնար եղածի չափ գիշերը ուշ-ուշ պէտք է  
ծիծ տալ: Յամենայն դէպս առաջին երեք ամիս-  
ները ամեն մի գիշերւայ ընթացքում ոչ աւելի  
քան 1—2 անգամ: Աւելի լաւ կլինի չորրորդ ամսից  
սկսած բոլորովին հրաժարւել գիշերը ծիծ տալուց:  
Երեխաներից շատերը մի կերպ անց են կացնում  
առանց գիշերւայ կերակրի, որ մեծ նշանակու-

Թիւն ունի թէ մօր և թէ երեխայի հանգստութեան և ոյժերի ամրապնդման համար: Շատ դէպքերում այդ սովորութիւնը հաստատուում է ինքն իրեն: Երեկոյեան կերակրից յետոյ երեխաները քնում են մինչև առաւօտ:

Թէ քանի ընդէ է տեում ծծելը, որոշելը դժուար է: Ընդհանրապէս առողջ ու ամրակազմ երեխան կարողանում է կշտանալ 8—10 ընդէում: Միշտ պէտք է հետևել, որ երեխան ծծելու ժամանակ չքնի և ծիծ տալը պէտք է շարունակել, մինչև որ նա եռանդով է ծծում: Նոյնիսկ եթէ երեխան երբ և իցէ պակաս է ծծում, հետևեալ անգամ ծծելիս նա լրացնում է այդ պակասը:

Ծիծ տալու ժամանակ անհրաժեշտ է հերթ պահել ստինքների մէջ և ամեն անգամ կերակրելիս ծծել տալ միայն մէկից:

Երբեմն, երբ երեխան թոյլ է կամ մայրը բաւականաչափ կաթ չունի, միաժամանակ կարելի է ծծել տալ երկուսից էլ: Ձէ կարելի ծիծ տալ առաջնորդելով երեխայի ճշով, որովհետև դա կարող է զանազան պատճառների հետևանք լինել: Եթէ երեխան ծծելուց յետոյ այլևս չի ճշում, դա չէ նշանակում, որ նա իսկապէս քաղցած էր:

Յաճախակի ու անժամանակ ծիծ տալը, խանգարելով կանոնաւոր մարսողութիւնը, երեխային աւելի անհանգիստ է դարձնում:

Երբ երեխան ճշում է, անհրաժեշտ է նրան լաւ գննել ու համոզուել, որ ամեն բան կարգին է և ոչ թէ իսկոյն և եթ ծիծ տալ: Երբեմն երեխան ճշում է ծարաւից և նրան հանգստացնելու համար բաւական է մի կում մաքուր ու եփ տւած ջուր տալ:

Ծծելուց յետոյ երեխան քնում է: Նրան հարկաւոր է պառկեցնել առանձին մահճակալի վրայ և լիովին հանգիստ տալ: Օրօրելը, երեխային անհանգստութիւն պատճառելուց զատ, կարող է առաջացնել ձգտոց ու փսխումն: Ծիծ տալու ժամանակ մայրը պէտք է նստած լինի և ոչ թէ ման գայ կամ պառկած դիրք ունենայ: Ամեն անգամ ծիծ տալուց առաջ, ստինքի պտուկը, որից այս անգամ ծծելու է երեխան, պէտք է լւանալ բորակաթթւի լուծոյթով (1 բաժակ եփ տւած ջրին 1 թէյի գգալ):

Ռ՞րբան ժամանակ պէ՞տք է շարունակել ծիծ տալը

Մայրը իր երեխային պէտք է ծիծ տայ 12 ամսից ոչ պակաս: Մի քանի կանանց կաթի արտադրութիւնը շարունակուում է աւելի երկար ժամանակ և եթէ ոչ մի արգելք չկայ, երեխան կարող է ծծել 2—4 ամիս ևս: Կուրջ պատճառների շնորհիւ երեխային կարելի է ծծից կտրել նաև 9 ամսից յետոյ: Այդ պատճառներին վերաբերում են մօր հիւանդութիւնը, կաթի չնչին քանակութիւնը և զանազան արտաքին պայմաններ: Մինչդեռ շատ յաճախ տեսնում ենք, որ մայրերը, չնայած կաթի բաւարար քանակութեան, սկսում են ժամանակից առաջ (7—9 ամսական հասակում) ուրիշ կերակուր ուտեցնել երեխային, չզաղարեցնելով ծիծ տալը: Երբեմն այդ բանը վնասակար է, որովհետև երեխաները շուտով հրաժարւում են մայրական կաթը ծծելուց: Առհասարակ, նման դէպքերում մենք խորհուրդ ենք տալիս այլ կերակուր ուտեցնել երեխային ուշ ուշ և քիչ քանակութեամբ:

Ծծից կտրելը.

Երեխային ծծից կտրել չի կարելի ամառը, որովհետև այդ ժամանակ շատ հեշտ կերպով զարգանում են երեխաների ամենաձանր փորհարութիւնները:

Եթէ երեխայի տարին լրանում է ամառայ սկզբին կամ կիսին, նրան պէտք է ծիծ տալ մինչև օգոստոսի վերջերը: Երբ 9—10 ամիս ծիծ տալուց յետոյ մօր կաթը չի բաւականանում երեխային, անհրաժեշտ է գործադրել խառն ձևով կերակրելը, որի մասին մանրամասն կիտենք հետևեալ գլխներից մէկում: Եթէ խառն ձևով կերակրելու կարիք է զգացւում ամառը, չպէտք է մոռանալ որ երեխայի վերաբերմամբ այդ բանը մեծ վտանգի հետ է կապւած և պէտք է խիստ կերպով կատարել այդ ձևով կերակրելուն վերաբերեալ բոլոր կանոնները: Յամենայն դէպս, եթէ խառն կերակրելը սկսւում է ամառը, աւելի լաւ է այլ կերակուր ուտեցնել երեխային, կարելի եղածին չափ քիչ քանակութեամբ: Փորհարութեամբ հիւանդանալու վտանգը այնքան մեծ է, որ աւելի ձեռնաու է երեխայի միքիչ քաղցած մնալը:

Երեխային այլ կերակրի րնտելացնելը.

Նախ քան ծծից կտրելը, երեխային պէտք է ընտելացնել այլ կերակրի: Առողջ երեխային ծծից կտրելուց 2 ամիս առաջ (8—10 ամսական հասակում) պէտք է սկսել այլ կերակրների ընտելացնելը: Մեծ մասամբ այս բանն անում են 6 ամսական հասակից, մինչդեռ այն երեխաները, որ 10—12 ամիս շարունակ մայրական կաթ են

ծծել, անհամեմատ աւելի լաւ են զարգանում: Այդպիսիների մէջ անգլիական հիւանդութիւնը (ռախիտ) սակաւ է պատահում և աւելի թոյլ տեսակն է: Նոյնը նկատուում է նաև ամառնային փորհարութիւնների վերաբերմամբ, որ առանձնապէս քայքայող ազդեցութիւն ունին ծծկերների վրայ: Փորհարութիւնները շուտ և հեշտութեամբ են անցնում, եթէ երեխան շարունակուում է մայրական կաթը ծծել:

Չատերը կարծում են որ տարին լրանալուց յետոյ ծիծ տալը երեխային օգուտ չի բերում: Այդ կարծիքի հետ համաձայնել չի կարելի, որովհետև մէկ տարեկան եղած երեխան շարունակելով մայրական կաթ ծծելը, կանոնաւոր կերպով զարգանում է: Միքանի ազդեր, մանուաւնդ արևելքում, երկու տարուց աւելի են ծիծ տալիս իրենց երեխաներին: Ռուս գիւղացուց մէջ ուշադրութեան արժանի է երեխային «3 պասից» ոչ պակաս ծիծ տալու սովորութիւնը:

Ընդհանրապէս, ուրեմն երեխային այլ կերակրների ընտելացնելը պէտք է սկսել մօտաւորապէս 10 ամսական հասակից: Ի հարկէ այս բանը ընդհանուր օրէնք չի կարելի համարել, որովհետև ամեն մի առանձին դէպքում պէտք է լինում ուշադրութեան առնել բազմատեսակ պայմաններ:

Մենք պէտք է հոգ տանենք երեխաների շահերի մասին և ամեն կերպ ձգտենք, որ նրանք մօր կաթով կերակրւին մէկ տարուց ոչ պակաս:

Երեխային այլ կերակրի ընտելացնելը խիստ կերպով պէտք է գանազանել «խառն կերակրելուց»: «Սառն կերակրել» նշանակում է ծիծ տալը չզաղարեցնելով, երեխային ուտեցնել նաև այլ կերակրներ, երբ մօր կաթի քանակութիւնն

անբաւարար է: Այս ձևով երբեմն պէտք է լինում կերակրել ամիսների ընթացքում: Իսկ ինչ վերաբերում է այլ կերակրների ընտելացնելուն, մենք պէտք է հասկանանք ծծից կտրելու անհրաժեշտութիւնից ստիպւած երեխային այլ կերակրների վարժեցնելը, որ տևում է 1—2 ամսից ոչ աւել: Այս գէպքում մենք ղիտամամբ երեխային քիչ ենք ծծել տալիս մայրական կաթ, որ պէսզի նա ընտելանայ այլ կերակրների: Մինչդեռ խառն կերակրելու ժամանակ ամեն կերպ աշխատում ենք, որ երեխան կարելի եղածին չափ մեծ քանակութեամբ ծծէ մօր կաթը:

Երեխային այլ կերակրների ընտելացնելը կայանում է նրանում, որ նրան յարմար կերակրի ենք վարժեցնում ծծից կտրելու նպատակով: Այդ կերակրներն են, գլխաւորապէս, կովի կաթը, ձուն և աթերան (կաշկա): Երեխային ապուր կամ մսաջուր կարելի է տալ գլխաւորապէս զանազանակերպութեան և ախորժակ գրգռելու նպատակով, որովհետև այդ կերակրները քիչ սնունդ են պարունակում իրանց մէջ:

Ընտելացնելը սկսում է այսպէս. օրական մի անգամ, ծիծ տալու փոխարէն, պէտք է անարատ և կամ 2 մասին ամենաշատը 1 մաս եփ տւած շուր կառնած կովի կաթ ուտեցնել երեխային: Վերջին տեսակը տրւում է միայն առաջին օրերի ընթացքում: Ծիծ տալը աստիճանաբար պէտք է փոխարինել կովի կաթով այն հաշուով, որ երեխան մօտաւորապէս 2 ամսից յետոյ դադարի մայրական կաթով կերակրելուց: Այդ ժամանակի ընթացքում կարելի է երեխային ընտելացնել նաև ուրիշ կերակրների (աթերայ, ձու): Երբ երեխայի վրայ կովի կաթը լաւ է ազդում, կարելի է նրան ծծից կտրել: Երբեմն հանգա-

մանքները ստիպում են երեխային ծծից կտրել աւելի վաղ:

Երեխային այլ կերակրների ընտելացնելը չպէտք է սկսել ամառայ ընթացքում: Երբ երեխան այլ կերակրների ընտելանալու միջոցին տառապում է փորհարութեամբ և այդ հիւանդութիւնը շուտով չի անցնում, անհրաժեշտ է նրան նորից ծիծ տալ:

Սկսու կնոջ կեանքն ու սննդառուրիւնը.

Ստնտու կինը պէտք է կանոնաւոր կեանք անցկացնի, առանձին ուշադրութիւն դարձնելով սննդառութեան վրայ, որպէսզի կարողանայ երեխայի համար բաւականաչափ կաթ արտադրել: Ուժասպառ ու ծանր աշխատանքը նրա համար վնասակար է, բայց և չպէտք է անգործ ու պարսպ կեանք անցկացնել: Ամենօրեայ գբօսանքներն անհրաժեշտ են:

Շատերը կարծում են, որ կերակրի մէջ չի կարելի գործածել մրգեղէն, աղի և թթու, բայց դա սխալ է: Ստնտու կինը կարող է ուտել ամեն ինչ, միայն թէ պէտք է խուսափի այն կերակրներից, որոնք նպաստում են ստամոքսի և աղիքների խանգարման, որ վնասակար ազդեցութիւն է ունենում երեխայի վրայ:

Ստնտու կինը երբ անբաւարար քանակութեամբ կաթ է ունենում, շատ յաճախ խորհուրդ են տալիս զանազան միջոցների դիմել: Այդ միջոցներից է գարեջուրը, որի նոյնիսկ թոյլ տեսակի գործածութիւնը ցանկալի չէ:

Երբ ստնտու կնոջ կաթը քիչ քանակութեամբ է արտադրւում, ամենալաւ միջոցն է կովի կաթ խմելը: Ամեն կերպ պէտք է պահպանուե կնոջ

հոգեկան հանգստութիւնը, որովհետեւ դա ահագին նշանակութիւն ունի:

Ծծմօր կերակրելը.

Այն հազազիւտ դէպքերում, երբ մայրը ոչ մի հնարաւորութիւն չունի երեխային ծիծ տալու, երեխայի համար ամենալաւ կերակուրն է օտար կնոջ կաթը: Ընդհանրապէս, արհեստական ձևով կերակրելը նոյնիսկ ամենալաւ պայմաններում, աւելի անբաւարար հետեանք է ունենում:

Բայց երեխայի համար ինչպիսի կին կարելի է վարձել իբրև ծծմայր: Չէ՞ որ մեծ մասամբ այդպիսի դէպքերում ծծմօր կեանքն է խորտակուում և հեռակապէս, կերակրող երեխայի կեանքը գնուում է ուրիշ էակի մահւամբ: Այս տեսակէտից մենք պէտք է բոլոր ուժով կռիւ մղենք անբնական ու անբարոյական «Ծիծ տալու» արհեստի դէմ:

Ո՞ր դէպքերում կարելի է երեխայի համար ծծմայր վարձել.

Կինը, օտարի երեխային կարող է ծիծ տալ այն դէպքում, երբ իր սեպհական երեխան հասել է որոշ հասակի և կամ, միաժամանակ կերակրում է թէ իր և թէ օտար երեխայի: Շատ կանայք կարող են միաժամանակ երկու երեխայի կերակրել:

Պէտք է ի նկատի առնել այն հանգամանքը, որ յաճախ ծծմայրը յանձն է առնում կերակրել օտար նորածնին, երբ իր սեփականը արդէն 2—3 ամսական է: Օտար նորածնի վատ ծծնելուց ծծմօր ստիւնքները չեն զատարկուում ինչպէս

հարկն է և հետեանքը լինում է այն, որ նրա ստիւնքները սկսում են քիչ քանակութեամբ կաթ արտադրել անհրաժեշտ գրգռման բացակայութեան պատճառով: Սրանով է բացատրւում այն երեւոյթը, որ իր երեխային յաջողութեամբ ծիծ տւող մայրը, երբ կերակրում է միայն օտարի երեխային, կորցնում է կաթը: Այս դէպքերում անհրաժեշտ է, որ ծծմայրը միաժամանակ կերակրէ թէ իր և թէ օտար երեխային:

Իբրև ծծմայր կարելի է վարձել նաև այն կանանց, որոնց երեխան վախճանւել է, բայց կաթի քանակութիւնը բաւարար է և իրենք, ընդհանրապէս, առողջ են:

Յարմար ծծմայր շուկելը հեշտ չէ. մի կողմ թողնենք, որ նիւթականի պատճառով շատերի համար անմատչելի է: Ահա այս է պատճառը, որ ծնողները ստիպւած են երեխային արհեստական ձևով կերակրել:

Կանոններ ծծմայր ջոկելու համար.

Այն բացառիկ դէպքերում, երբ թոյլատրւում է ծծմայր վարձել, անպայման պահպանելով ծծմօր երեխայի առողջութիւնը, պէտք է աչքի առաջ ունենալ հետևեալ կանոնները:

Առաջին և զլխաւոր պայմանն է՝ ծծմօր առողջութիւնը: Այս կողմից նրան պէտք է քննել ամենայն ուշադրութեամբ:

Լաւ ծծմայր կարող է լինել այն կինը, որի սեպհական որդին առողջ է և զարգացումը կանոնաւոր:

Ընդհանրապէս, կերակրող և ծծմօր երեխայի հասակը պէտք է համապատասխան լինեն: Այն դէպքերում, երբ այդ յարմարութիւնը

չկայ, պէտք է յիշել որ ծնելուց յետոյ առաջին օրերը կինը չի կարող ծծմայր լինել: Ծնելուց յետոյ հիւանդանալու հաւանականութիւնը և կաթի անբաւարար քանակութիւնը, ստիպում են խուսափել այդպիսի կանանցից:

Ծծմօր յարմար հասակը պէտք է համարել 20—35 տարեկան:

Իբրև ծծմայր չի կարելի վարձել այնպիսի կնոջ, որը 6 ամիս առաջ է ծնել, որովհետև շատ անգամ հէնց այդ ժամանակահատից սկսում է նրա կաթի քանակութիւնը պակասել:

Առհասարակ պէտք է խուսափել առաջին անգամ ծնող կանանցից, որովհետև նրանց կաթի քանակութիւնը, միքանի որդի ունեցող կանանց կաթի քանակութիւնից քիչ է և երբեմն դժուար է մարսւում: Բացի դրանից, առաջին անգամ ծնող կանայք անծանօթ են լինում երեխայ խնամելուն վերաբերեալ կանոններին:

Անհրաժեշտ է, որ ծծմօր կաթի քանակութիւնը բաւարար լինի: Այդ բանն իմանալու համար, երեխային պէտք է կշռել ծծմօր սախիքից ծծելուց առաջ և յետոյ: Ամենահասարակ և տարածած միջոցը, որ որոշում է ծծմօր կաթի քանակութիւնը, դա ծծկեր երեխայի կանոնաւոր զարգանայն ու քաշի աւելանայն է:

Ծծմօր կաթի որակը, բացի արտաքին տեսքից, որոշում է նաև մանրադիտական ու քիմիական հետազօտութեամբ. վերջին դէպքերում շատ զգոյշ պէտք է լինել: Այստեղ նկատուում է նոյնը, ինչ որ վերևում ասացինք այն մայրերի մասին, որոնց կաթի բաղադրութիւնը այնքան էլ լաւ չէ, բայց նրանց կաթով մեծացած երեխաները առողջ են:

Ծծմօր կեանքն ու սննդառութիւնը.

Վարձելով իբրև ծծմայր, կինը ընկնում է կեանքի բոլորովին այլ պայմանների մէջ: Անչափ հոգատար մայրերը ամեն կերպ աշխատում են գիրացնել ծծմօրը, միևնոյն ժամանակ արգելելով նրան աշխատանքով զբաղելը: Այս դէպքում լաւ կլինէր հետևել հետևեալ կանոններին. ծծմօր կերակուրը պէտք է սննդաւոր, բաւարար քանակութեամբ և մօտաւորապէս նման լինի այն կերակրին, որով նա սնւել է իր սեպհական տանը ծծմօր համար անհրաժեշտ է թեթև աշխատանք (մանկանոցի կարգի բերելն ու երեխայի սպիտակեղէնները լանալը) և բաւարար ժամանակ բաց օդում գտնուելը:

Վերին աստիճանի կարևոր է, որ ծծմայրը ողելից խմիչքներ չզործածի:

Սովորաբար, ծծմայրը յանձն է առնում այդ պաշտօնը ծանօթ չլինելով երեխայ խնամելու կանոններին հետ և լի ամեն տեսակ վնասակար սովորութիւններով ու նախապաշարմունքներով, որ հետևանք է իր շրջանի ծայրայեղ ազդեցութեան: Այս մասին պէտք է յեշել և հետևել, որ ծծմայրը երեխայի հետ չանի այն, ինչը իր կարծիքով օգտակար է, բայց իսկապէս մեծ վնաս է բերում: Ծծմայրերի վնասակար սովորութիւններից մէկն է՝ երեխային խաշխաշի գլխիկներից պատրաստած հիւթ տալը քնեցնելու նպատակով, որ ափիոնով (օպիոյ) թունաւորել է նշանակում: Ծծմայրը չպէտք է քնեցնի երեխային իւր հետ, սեպհական անկողնում, որովհետև եղել են դէպքեր, երբ քնած երեխան խեղդամահ է եղել: Երեխային հանգստացնելու նպատակով երբեմն զրգոում, խաուտ են տալիս սեռական գործա-

րանները: Այդ բանը վերջը կարող է պատճառ  
լինել երեխայի ծանախանութեամբ պարապելուն:  
Վնասակար է օրօրելը, բերանում ծծակ դնելը և  
աւելորդ անգամ ծիծ տալը, որ առաջացնում է  
մարսողութեան խանգարումն:

### Արհեստական ձեռով կերակրելը.

Երբ ծիծ տալու հնարաւորութիւն չկայ և  
ծնողները չեն ուզում, կամ չեն կարող ծծմայր  
վարձել, այդ դէպքում սկսում են երեխային ար-  
հեստական ձեռով կերակրել:

Այս ձեռով կերակրելու դէպքում, ծծկեր երե-  
խայի ամենալաւ կերակուրը պէտք է համարել  
կովի կաթը: Ծծկեր երեխային զանազան տեսակ  
ալիւրներից պատրաստած խիւսեր, արհեստական  
ձեռով թանձրացրած կաթ և նման կերակրներ  
ուտեցնելը շատ վատ հետեւանքներ է ունենում,  
այդ պատճառով մենք խորհուրդ ենք տալիս խու-  
սափել այդպիսի կերակրներից:

### Արհեստական ձեռով կերակրելը վսանգաւոր է.

Արհեստական ձեռով կերակրելը նոյնիսկ ամե-  
նալաւ պայմաններում, համեմատելով մայրական  
կաթով կերակրելու հետ աւելի շատ մահացու-  
թիւն է տալիս, մանաւանդ աղքատ ընտանիք-  
ներում: Այսպէս, մօտ ժամանակներս հաստատու-  
ած է, որ Գերմանայի քիչ թէ շատ ունեւոր  
զասակարգերի մէջ, արհեստական ձեռով կերա-  
կրող երեխայոց մահացութիւնը երկու անգամ,  
խիչ չունեւոր ընտանիքներում չորս անգամ աւե-  
լի է, քան թէ մայրական կաթով կերակրող-  
ներինը:

Արհեստական ձեռով կերակրելը առանձնապէս  
վտանգաւոր է նորածինների կեանքի առաջին  
ամիսների ընթացքում: Մեծ մասամբ, ծիծ տալու  
կամ չտալու հարցը որոշելը երեխայի համար  
կեանքի կամ մահու հարց է: Յաճախ, այն մար-  
դիկ, որոնք վերոյիշեալ հարցի հետ լաւ ծանօթ  
չեն, ասում են, որ արհեստական ձեռով կերակրելը  
կատարելապէս լաւ հետեւանքներ է ունենում:  
Դա բոլորովին սխալ է: Այդպիսի մարդիկ, ար-  
հեստական ձեռով կերակրող երեխաներից կեն-  
դանի մնացածներին իբրև օրինակ են բերում,  
բայց մոռանում են այն բազմաթիւ, անթիւ ան-  
համար նորածինների մասին, որոնք մեռել են  
իրենց կեանքի առաջին շաբաթների և ամիսների  
ընթացքում, մայրական կաթի բացակայութեան  
շնորհիւ: Մենք, երեխայոց բժիշկներս, ամեն քայ-  
լափոխման հարկադրում ենք համոզւելու, որ  
մայրական կաթից զրկւած երեխաները շատ քիչ  
շանս ունին ապրելու: Չուր չէ կազմւել հետեւեալ  
կարծիքը. «կեանքի առաջին օրերից արհեստական  
ձեռով կերակրող երեխային աւելի մեծ վտանգ  
է սպառնում, քան թէ զինւորին՝ պատերազմի  
զաշտում»:

Արհեստական ձեռով կերակրելու վտանգը զգա-  
լի կերպով պակասում է, եթէ երեխան գոնէ  
առաջին շաբաթները, կամ աւելի երկար ժամա-  
նակ, կերակրւում է մայրական կաթով: Վտանգը  
պակասում է նաև այն դէպքում, երբ մայրը, քիչ  
քանակութեամբ կաթ ունենալով, ծիծ է տալիս  
երեխային և միևնոյն ժամանակ, կերակրում է  
նրան կովի կաթով. այսինքն՝ գործադրւում է  
«խառն կերակրել»-ը, որի մասին մանրամասն  
պէտք է խօսենք հետեւեալ գլխներից մէկում:

Մայրերն ու շրջապատողները ծիծ տալը

փոխարինելով արհեստական ձևով կերակրելուն, կարծում են, որ դրանով զգալի կերպով պակասեցնում են իրենց հոգսերը երեխայի վերաբերմամբ, բայց ստացւում է հակառակը: Արհեստական ձևով կերակրող երեխաները շատ յաճախ են հիւանդանում մարսողութեան խանգարումներով, որոնք յետոյ կրկնւում են և շատ անհանգստութիւն ու վիշտ են պատճառում մայրերին, մի կողմ թողնենք, որ հիւանդ երեխային խնամելը անհամեմատ աւելի դժւար է, քան թէ առողջին:

Քանի որ կնոջ կաթը երեխայի համար ամենալաւ կերակուրն է, արհեստական ձևով կերակրելու ժամանակ էլ անհրաժեշտ է երեխային այնպիսի կերակուր ուտեցնել, որի բաղադրութիւնը նման լինի կնոջ կաթի բաղադրութեան: Այդպիսի կերակրներ են՝ իշու, ձիու և այծի կաթը: Որովհետև յիշեալ անասունների կաթը գործածելը սովորութիւն չէ դարձած և դժւար է ձեռք բերել, սովորաբար գործ է ածւում կովինք, որի բաղադրութիւնը բաւական նման է կնոջ կաթի բաղադրութեան:

Ահագին առաւելութիւն ունի այն կաթը, որ երեխան անմիջապէս ծծում է ստինքից, այդ դէպքում կաթը իր կենսունակ յատկութիւնները չկորցնելուց զատ, չի էլ կեղտոտւում: Այս հիման վրայ շատ անգամ խորհուրդ է տրւել, որ երեխաներին ծծել տան անմիջապէս անասունների ստինքից. օր.՝ այծերի: Այս ձևով ծծելը կեանքում մեծ դժւարութիւնների և անյարմարութիւնների է հանդիպում, այդ պատճառով էլ քիչ ի գործադրում:

Կովի կաթի պակասութիւն. ու միջոցներ դրա դէմ.

Սովորաբար հարկադրւած ենք կերակրել երե-

խաներին կթած (կովի) կաթով, որը, թէև կորցրել է իր կենսունակ յատկութիւններից շատերը, այնուամենայնիւ լաւ է այն կերակրներից (զանազան ալիւրներից պատրաստած խիւսեր, թանձրացած կաթ և այլն), որ ուտեցնում են երեխաներին արհեստական ձևով կերակրելու ժամանակ: Երեխայի համար կաթ պէտք է ստացւի առողջ կովերից, որոնք ենթարկւում են անասնաբուժի յաճախակի քննութեան և պահւում են լաւ, մաքուր ու լոյս շինութեան մէջ: Այն անձինք, որ զբաղւում են երեխային խնամելով և նրա համար կաթ ձեռք բերելով, պէտք է առողջ լինեն ու խիստ մաքրութիւն պահպանեն: Մեզ մօտ, կաթ մատակարարող ընկերութիւններից շատ քչերն են համապատասխանում վերոյիշեալ պահանջներին:

Արտասահմանում, մանաւանդ Ամերիկայում և Անգլիայում, ուր արհեստական ձևով կերակրելը մեծ ծաւալ է ստացել, այդպիսի հիմնարկութիւններ շատ կան, շատ լաւ կանոնաւորւած են և համապատասխանում են առողջապահական բոլոր պայմաններին:

Կաթի մէջ, նոյն իսկ ամենայն ուշադրութեամբ պահպանւած դէպքում, բացի կեղտից, օդից մեծ քանակութեամբ բակտերիաներ են ընկնում և զարմանալի արագութեամբ բազմանալով, փչացնում են կաթի աննպարար յատկութիւնը: Ի հարկէ, շատ լաւ կլինէր օգտուել հում, ամենայն խնամքով կթւած, բոլորովին մաքուր կաթով, բայց ափսոս որ այդպիսի կաթ ձեռք բերելը շատ դժւար է:

Կարր զտելու անհրաժեշտութիւնը.

Որովհետև սովորաբար ձեռք ենք բերում միջանի ժամ առաջ կթւած կաթ, որ գուրկ է

անթերի մաքրութիւնից, զտելու նպատակով եփ ենք տալիս: Երեխային չի կարելի հում կաթ տալ, որովհետև նրա մէջ բազմանում են մեծ քանակութեամբ բակտերիաներ, որոնք փշացնում են կաթի սննդարար յատկութիւնը և առաջ են բերում ստամոքսա-աղիքային խանգարումներ: Կաթի մէջ եղած բակտերիաներին ոչնչացնում են զանազան միջոցներով, որոնցից ամենաշատ տարածւած է հասարակ կերպով եփ տալը, Soxlet-ի սպարատում: Եռացնելը (ստերիլիզացիա) և ստտիճանաբար տաքացնելը մինչև 60°—70°, ըստ Ցեւի-ի (պաստերիզացիա):

Չսելու միջոցների (պաստերիզացիա և ստերիլիզացիա) պակասութիւնները.

Վերջերս, աւելի ու աւելի տարածւած է այն կարծիքը, որ ստիրեիլիզացիայի և պաստերիզացիայի միջոցով զտելը պակասեցնում է կաթի սննդարարութիւնը: Կաթի գլխաւոր բաղադրիչ մասերը շերմութեան բարձր աստիճանի ազդեցութեան տակ խիստ փոխւում են և մարսողութեան համար աւելի անյարմար են դառնում: Այդ պատճառով աւելի լաւ է կաթը սովորական ձևով 5 րոպէի ընթացքում եփ տալ, արագ կերպով սառեցնել ու այնպէս գործածել: Այս ձևով եփ տալով կարելի է հասնել նպատակին, եթէ կաթը եփ աալուց յետոյ պահւում է սառն տեղում:

Չնայած եփ տալուն, այնուամենայնիւ կաթի մէջ շարունակում են բազմանալ բակտերիաներ, թէև քիչ քանակութեամբ: Ցանկալի է եփ տալու համար օրական 2—3 անգամ նոր կթած կաթ ձեռք բերել:

Կաթը պէտք է թեթև կերպով տաքացնել

այն չափով, որ երեխան մի անգամ կերակրելու համար բաւականանայ: Միևնոյն կաթը երկրորդ անգամ չպէտք է եփ տալ, որովհետև, ինչպէս վերն ասացինք, գլխաւոր բաղադրիչ մասերը շերմութեան բարձր աստիճանի տակ խիստ փոխւում են և մարսողութեան համար անյարմար են դառնում: Կաթը, մանաւանդ ամառը, միքանի ժամ մնալով տաք տեղում, եթէ նոյնիսկ համը քաղցր է և թթւելու նշաններ չեն երևում, գործածելու համար անպէտք է: Ամեն կերպ պէտք է աշխատել, որ ձեռք բերւած կաթը նոր կթած լինի: Ի հարկէ մեծ քաղաքներում այդպիսի կաթ գտնելը դժւար է. այս դէպքում մենք խորհուրդ ենք տալիս կաթ ձեռք բերել յայտնի կաթնատնտեսական ագարակներից, որովհետև չարչիների ծախսած ու շուկայում ձեռք բերած կաթը շատ կեղտոտ է լինում:

Հնարաւոր եղած դէպքում աւելի լաւ է միքանի առողջ կովերի կաթ ստանալը, որովհետև մի կովի վնասակար ազդեցութիւնը (երբ կովը հիւանդ է) զգալի կերպով թուլանում է միւս կովի կաթի լաւ յատկութիւնից:

Երբէք երեխային թթւած կաթով չպէտք է կերակրել: Առհասարակ կաթի թթւած լինելը իմացւում է համից ու հոտից, իսկ երբ կասկածելի է, հարկաւոր է գործածել հետևեալ պարզ միջոցը. վերցնել կաթ ու մի մաս 70°/10 սպիրտ և խառնել, թափահարելով խառնելու ժամանակ. եթէ կաթը թթւել է, առաջ կգան փոքրիկ սպիտակ գնտիկներ:

Կարը ջրախառնելը.

Որովհետև կովի կաթը աւելի դժւարամարս է, քան թէ կնոջը, այդ պատճառով առաջին օրերը

նորածնին պէտք է կերակրել ջրախառն կաթով (1 մաս կաթին 1 մաս եփ տւած շուր): Զրի քանակութիւնը հետզհետէ պէտք է պակասեցնել այն հաշուով, որ երեխան 3-րդ ամսւայ սկզբին, եթէ մարսողութիւնը կանոնաւոր է, կարողանայ կերակրել անարատ կաթով: Առաջին 4 շաբաթւայ ընթացքում երեխային պէտք է տալ 1 մաս կաթին 1 մաս շուր խառնած, հետեւեալ 4 շաբաթւայ ընթացքում՝ 3 մաս կաթին 1 մաս շուր խառնած, իսկ գրանից յետոյ անարատ կաթ: Երբեմն, երեխաները անարատ կաթ կարողանում են մարսել աւելի փոքր հասակում:

Մտամոքսա-աղիքային խանգարումները ժամանակ, երեխային պէտք է տալ շատ շուր խառնած կաթ: Եփած բրնձի, գարու, վարսակի և այլն շուր, կաթի մէջ կարելի է խառնել միմիայն բժշկի թոյլաւութեամբ:

Կնոջ կաթը պարունակում է իր մէջ աւելի շատ շաքար, քան թէ կովինը: Այդ պատճառով կովի կաթին շուր խառնելու ժամանակ, մի բաժակ ջրախառն կաթի մէջ պէտք է ամել  $1\frac{1}{2}$  թէյի գդալ կաթնային և կամ սովորական ծեծած շաքար:

Սկզբի 6 շաբաթւայ ընթացքում երեխային պէտք է կերակրել 2 ժամը մի անգամ, մինչև 3 ամսական գառնալը 3 ժամը, 4-րդ ամսից սկսեալ  $3\frac{1}{2}$ —4 ժամը մի անգամ: Աւելի լաւ է երեխային գիշերը չկերակրել, հակառակ դէպքում, միջոցը պէտք է լինի 6 ժամից ոչ պակաս:

Երեխային գգալով կերակրելը լաւ չէ: Կաթը պէտք է լցնել ապակեայ եղջիւրիկի (բոժօկ) մէջ, որի ծայրին ամբարցրած է սեալինէ ծծակ ու այնպէս կերակրել: Ծծակի անցքը շատ մեծ չպէտք է լինի, որովհետև երեխային այս ձևով կերա-

կրելու պայմանները պէտք է նման լինեն ծիծ տալու պայմաններին: Չողից, երկաթից և ժեստից շինած եղջիւրիկները գործածութեան համար անպէտք են, որովհետև շատ հեշտութեամբ կեղտոտւում են. եղջիւրիկի և ծծակի մաքրութիւնը երեխայի առողջութեան համար, առաջին պայմանն է: Եղջիւրիկն ու ծծակը ամեն անգամ, կերակրելուց յետոյ պէտք է եռացրած ջրով լանալ: Ծծակը, մինչև հետեւեալ անգամ կերակրելը, պէտք է պահել նոր պատրաստած բորակաթի լուծոյթի մէջ:

Կերակրելուց յետոյ եղջիւրիկի մէջ երբէք չպէտք է կաթ թողնել հետեւեալ անգամ կերակրելու նպատակով, որովհետև այդպիսի կաթը անպէտք է և կարող է խանգարում առաջացնել:

Երեխային ի՞նչ քանակութեամբ պէժ է կար սալ.

Մի անգամ կերակրելու համար տրուող կաթի քանակութիւնը կախւած է երեխայի պահանջներից: Թոյլ երեխային հարկաւոր է քիչ, իսկ ուժեղին շատ քանակութեամբ կաթ տալ: Երեխային պէտք է կերակրել մինչև այն բուլէն, քանի որ նա եռանդով է ծծում: Որոշել, թէ ամեն անգամ ինչ քանակութեամբ պէտք է կաթ տալ երեխային, շատ դժւար է. ընդհանրապէս կարելի առաջնորդել հետեւեալ բնական չափով:

Հասակը.	Քանի՞ անգամ պէտք է կերակրել.	Մի անգամ կերակրելու համար գործածուող կաթի քանակութիւնը.	24 ժամւայ ընթացքում.
I—II ամս.	7—8 անգամ.	50—100 գրամ. *)	350—800 գր.
II—IV »	7 »	100—125 »	700—875 »
IV—VI »	6 »	125—160 »	750—1000 »
VI—XII »	5 »	200—240 »	1000—1200 »

\*) 15 գրամը—1 թէլի գգալի, 200 գրամը—1 բաժակի:

Ընդհանրապէս լաւ կլինի առաջնորդել հե-  
տեւեալ կանոնով. երեխայի համար, մանաւանդ  
արհեստական ձևով կերակրելու ժամանակ, աւելի  
օգտակար է չկշտանալը, քան թէ չափից շատ  
ուտելը: Այս կանոնին պէտք է հետևել մանա-  
ւանդ ամառայ շոգ եղանակներին:

6 - 8 ամսական հասակում երեխային կա-  
րելի է ուտեցնել նաև այլ կերակուր. օր.՝ ջրալի  
մաննայա կրուպա, որով սկզբներում պէտք է  
կերակրել օրական մէկ, իսկ յետոյ երկու անգամ:  
Չու, մսաջուր ու պաքսիմատ երեխային պէտք է  
տալ 10 - 12 ամսական հասակից սկսած: Երբեմն  
երեխաները մէկ տարուց նոյնիսկ աւելի կերա-  
կրում են միայն կովի կաթով և կատարելապէս  
առողջ են լինում: Միքանի դէպքերում երեխայի  
վրայ փաստակար չէ ազդում նաև վաղաժամ այլ  
կերակրի ընտելացնելը: Այս կամ այն ձևով կե-  
րակրելու ունեցած հետևանքը որոշող միակ և  
ուղիղ միջոցը երեխայի կանոնաւոր աճեցն է:

### Սառն ձեռով կերակրելը.

Սառն ձեռով կերակրելը գործադրում է այն  
դէպքերում, երբ մայրը բաւարար քանակութեամբ  
կաթ չունի կամ չի կարողանում երեխային կա-  
նոնաւոր կերպով կերակրել, աշխատանքի գնալու  
պատճառով:

Մայրական կաթի ամեն մի կաթիլը երե-  
խայի համար շատ թանգ արժէ, ամեն կերպ  
պէտք է աշխատել, որ մայրը կերակրէ երեխային  
իր կաթով, գոնէ քիչ քանակութեամբ: Այն դէպ-  
քում, երբ մօր կաթի քանակութիւնն անբաւարար  
է կամ նա հնար չունի պարբերաբար ծիծ տալու,  
միաժամանակ, երեխային պէտք է ուտեցնել նաև

կովի կաթ: Այն բազմաթիւ կանայք, որոնք աշ-  
խատանքի գնալու պատճառով ստիպւած են եր-  
կար ժամանակ մենակ թողնել իրենց երեխանե-  
րին, պէտք է վերոյիշեալ ձևով կերակրեն, որով-  
հետև դրա հետևանքները արհեստական ձևով կե-  
րակրելու հետևանքներից համեմատաբար աւելի  
լաւ են: Մօր բացակայութեան ժամանակ, առ-  
աջնորդելով «արհեստական ձևով կերակրելը»  
գլխում յիշւած կանոններով, երեխաներին արւում  
է կովի կաթ: Երբ աշխատող կինը ազատ է,  
պէտք է ծիծ տայ իր երեխային: Այն դէպքում,  
երբ մօր կաթի քանակութիւնն անբաւարար է,  
պէտք է երեխային ծծել տալ ստինքում եղած  
բոլոր կաթը և յետոյ կերակրել կովի կաթով:

Ծծակի անցքը մեծ չպէտք է լինի, հակա-  
ռակ դէպքում երեխաները վարժւելով հեշտ ծծե-  
լուն, կհրաժարւեն մօր ստինքից ծծել:

### Ծծկեր երեխայի կանոնաւոր անումը.

Թէև երեխայի աճումը ամեն մի առանձին դէպ-  
քում տատանւում է բաւական լայն սահմաննե-  
րում, ներկայացնելով զանազան տեսակ շեղում-  
ներ, բայց և այնպէս կարելի է մատնացոյց  
անել միջին, բնական չափը, որի սահմաններում  
կատարւում է երխայի աճումը: Առաջնորդելով  
այս փաստերով, կարելի է իմանալ երեխան կա-  
նոնաւոր է աճում թէ ոչ:

Երեխայի կանոնաւոր աճումը արտայայտւում  
է նրա քաշով, հասակով (բոյ), գլխի և կրծքի  
շրջագծով, առաջին զգացմունքների արտայայ-  
տութեամբ և իր ժամանակին ատամների գուրս  
գալով:

Երեխայի քառ.

Երեխայի քառը միջին թվով հեռակետն է.

Ամիսներ.	Գրվանքայ.
0 . . .	7 <sup>1</sup> / <sub>2</sub>
1 . . .	9 <sup>1</sup> / <sub>4</sub>
2 . . .	11 <sup>1</sup> / <sub>4</sub>
3 . . .	13
4 . . .	15
5 . . .	16 <sup>1</sup> / <sub>4</sub>
6 . . .	17 <sup>1</sup> / <sub>2</sub>
7 . . .	18 <sup>3</sup> / <sub>4</sub>
8 . . .	19 <sup>3</sup> / <sub>4</sub>
9 . . .	20 <sup>3</sup> / <sub>4</sub>
10 . . .	21 <sup>1</sup> / <sub>2</sub>
11 . . .	22 <sup>1</sup> / <sub>2</sub>
12 . . .	23

Երեխայի քառը կրկնապատկում է 5-րդ ամսւայ վերջը և եռապատկում՝ տարւայ վերջը: Երեխայի առողջութիւնը որոշելու դէպքում, չի կարելի առաջնորդել միայն նրա քառով: Միջին թվով, առողջ երեխայի երկարութիւնն է 50 սանտիմետր, կրծքի շրջագիծը 31—33 սանտ. և գլխի շրջագիծը՝ 34—35 սանտ.: Առաջին տարւայ վերջը հասակը երկարում է 20 սանտ., իսկ գլխի ու կրծքի շրջագիծերը հաւասարւում են և մօտաւորապէս հասնում 45—46 սանտ.: Նորածնի զգայողութեան գործարաններինց ամենաառաջինը զարգանում է նրա ճաշակը (համառնելը): Երեխաները զանազանում են դառը քաղցրից: Երկու ամսական դառնալուց յետոյ արտայայտւում է առարկաներ զանազանելու ընդունակութիւնը: Ծնողներին երբեմն անհանգս-

տութիւն է պատճառում երեխայոց աչքերի շիւղութիւնը, այս երեւոյթը կախած է աչքերի անհաւասար շարժումից և շուտով անցնում է: Լսողութիւնը սկզբներում շատ թոյլ է, բայց 6-րդ շաբաթւայ ընթացքում դառնում է բաւարար: Երեխայի մէջ բաւական խիստ է արտայայտւած քաղց զգալը, որ նկատւում է աշխարհ եկած րոպէից: Առաջին ժպիտը արտայայտւում է 2-րդ ամսւայ վերջը: Այս ժամանակից երեխան սկսում է ճանաչել շրջապատողներին: Գլուխը կարողանում է որոշ գիրքով բռնել, 3 ամսական եղած ժամանակ. 6 ամսական հասակում նստում է և սողում, 9-րդ ամսում կանգնում է, իսկ 12-րդ ամսւանից, շատ երեխաներ ինքնուրոյն կերպով ման են գալիս ու սկսում են խօսել: Քիչ չէ պատահում, որ այդ երեւոյթները ուշ են արտայայտւում, դա հիւանդութեան նշան չէ:

Ա.սամների դուրս գալը. դրա յարաբերութիւնը դէպի երեխայոց հիւանդութիւններ.

Ատամներ դուրս գալու ժամանակ ոչ մ հիւանդական արտայայտութիւն չի նկատւում, հակառակլայն ծաւալ ստացած նախապաշարմունքին, թէ երեխայոց հիւանդութիւններից շատերը, մանաւանդ մարսողութեան խանգարումները, սերտ կերպով կապւած են ատամներ դուրս գալու հետ: Ներկայումս մենք գիտենք, որ բոլոր հիւանդութիւնները առաջանում են բոլորովին այլ պատճառներից: Մայրերից շատերը, երբ երեխան շատ քանակութեամբ թուր (բերանի ջուր) է արտադրում, այս երեւոյթը ընդունում են իբրև առաջին նշանը, ատամների դուրս գալու վերաբերմամբ: Դա սխալ է: Թքահոսութիւնը արտա-

յայտութիւն է թքային գեղձերի վարդացող գործունէութեան, որ սկսուում է 3-րդ ամսանից, ատամների դուրս գալուց բաւական ժամանակ առաջ և վերջիններին հետ ոչ մի կապ չունի:

Առաջին ատամները սովորաբար յայտնուում են 6-րդ ամսում: Ատամները դուրս են գալիս հետեւեալ կարգով:

Ամենից առաջ յայտնուում են ստորին ու վերին (մէջ տեղի), կտրիչ ատամները, յետոյ՝ վերին ու ստորին (կողքի) կտրիչները: Սովորաբար, առողջ երեխան տարւայ վերջը ունենում է 8 հատ կտրիչ ատամներ: Երկրորդ տարում յայտնուում են սեղանատամներն ու ժանիքները և 3-րդ տարւայ սկզբին՝ մնացեալ չորս սեղանատամները: Սրանով վերջանում է կաթնային ատամների դուրս գալը: Կաթնատամները երբեմն այս կարգով չեն դուրս գալիս: Թէև սակաւ, բայց պատահում է, որ առաջին ատամները յայտնուում են բաւական շուտ, օր.՝ 4-րդ, 5-րդ ամսում, այս երեւոյթը չի ցոյց տալիս, որ երեխան շատ առողջ է, ինչպէս շատերը սխալմամբ կարծում են: Աւելի յաճախ պատահում է ատամների ուշ դուրս գալը և թէ ուրիշ կողմերից երեխան բոլորովին առողջ է մնում, այս երեւոյթին առանձին նշանակութիւն չպէտք է տալ: Ամենից յաճախ ատամները ուշ են դուրս գալիս անգլիական հիւանդութեան (ռախիա) ժամանակ:

Ռ ա խ ի ս.

Ռախիտը շատ տարածւած հիւանդութիւն է, որ խանգարում է երեխայի կանոնաւոր աճումը: Յաճախ, այդ հիւանդութիւնը արտայայտուում է նրանով, որ երեխան ուշ է սկսում որևէ դիրքով,

գլուխը պահել, նստել, ման դալ և խօսել: Այս մասին չպէտք է մոռանալ. երբ երեխայի աճման ընթացքը կանոնաւոր չէ, բժշկի խորհրդով իր ժամանակին պէտք է միջոցներ ձեռք առնել:

Երեխային խնամելը.

Կանոնաւոր աճումն ու առողջութիւնը պահպանելու համար, երեխան պէտք է գտնւի յարմար պայմաններում: Այդ պայմաններից գլխաւորներն են՝ կանոնաւոր ու բաւարար սննդաւութիւն, օդի ազդեցութիւն, լոյսի ու մաքրութեան անազին նշանակութիւն: Անհրաժեշտ է նաև մօտ ծանօթ լինել երեխայոց խնամելու բոլոր կանոններին, սրպէսզի թիւրիմացութեան շնորհիւ երեխան օգուտ ստանալու փոխարէն չփասուի: Մննդաւորութեան մասին արդէն բաւական խօսել ենք: Ամենից շատ զանցաւորութիւն նկատուում է մաքրութեան վերաբերմամբ, այդ պատճառով էլ մանրամասն խօսենք այդ մասին:

Մաքրութիւն.

Շատ հիւանդութիւններ առաջ են գալիս երեխային կեղտոտ պահելուց ու նրա շրջապատի կեղտոտութիւնից: Կանոնաւոր խնամելու գըլխաւոր պայմանն է՝ թէ երեխայի և թէ այն բոլորի մաքրութիւնը, սրոնք որևէ կապ ունեն երեխայի հետ:

Մանկանոցի յատակը միշտ պէտք է մաքուր լւանալ: Պատերի փոշին պէտք է մաքրել կարելի եղածին չափ յաճախակի և ոչ մի տեղ փոշի չպէտք է թողնել: Երեխայի մահճակալն ու սպիտակեղէնները վերին աստիճանի պէտք է

մաքուր լինեն: Երեխային ամեն օր պէտք է լողացնել մաքուր ու տաք ջրով (ըստ Րէօմիւրի 28<sup>0</sup>), ծնւած օրից սկսած մինչև 6 ամսական հասակը, որից յետոյ կարելի է օրամէջ լողացնել: Երեսն ու աչքերը պէտք է լանալ ոչ թէ վաննայի, այլ բոլորովին մաքուր ջրով: Լողացնելու ժամանակ օձառ կարելի է գործածել շաբաթական երկու անգամ: Չպէտք է գրաւել զանազան սեկլամներով, որ գովում են երեխաների համար պատրաստած այս կամ այն օձառը: Յայտնի գործարանների օձառը երեխաների համար յարմար է: Չւից պատրաստած օձառը շատ գործածական է: Առանձին խնամքով պէտք է լանալ երեխայի կաշւի ծայքերը, որովհետև վերջինների արանքում կարող է կեղտ հաւաքւել ու գրգռում առաջացնել: Սպունգը շատ հեշտութեամբ է կեղտաւում, գրա համար էլ ամեն անգամ, գործածելուց յետոյ, եռացրած ջրով ուշադրութեամբ պէտք է լանալ ու չորացնել:

Ամեն անգամ կղկղանք արատազրկուց յետոյ, երեխային գոլ ջրով պէտք է լանալ: 4—5 ամսական հասակից, պէտք է երեխային մաքրութեան վարժեցնել և որոշ ժամանակներ ուսեցնելի (գորշօչեկ) վրայ բռնել: Երեխան շուտով հասկանում է թէ իրենից ինչ է պահանջւում և ազատում է մօրն աւերորդ հոգսերից: Հասկանալի է, որ այդ բանը լաւ է նաև օգի մաքրութեան համար:

Բեռանի խնամելը.

Երեխայի բերանի վրայ լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնել: Առողջ երեխայի բերանը, եթէ նա կանոնաւոր կերպով կերակրւում է մօր կաթով,

կարելի է և չմաքրել: Երբ երեխան, բացի մայրական կաթից, ուրիշ կերակուր էլ է ուտում, ամեն անգամ, կերակրելուց առաջ պէտք է մաքրել բերանը: Արհեստական ձևով կերակրելու ժամանակ, ամեն անգամ, կերակրելուց առաջ, երեխայի բերանը պէտք է մաքրել բորակաթվի կամ բորակաքարի լուծոյթով (1 բաժակ ջրին—1 թէյի գդալ): Այս գործողութիւնը կատարելու համար, մայրը իր ձեռքերը օձառով լաւ լանալուց յետոյ, ճկոյթի վրայ փաթաթում է բամբակ կամ շատ մաքուր շորի կտոր, թաթախում է լուծոյթի մէջ և գգոյշ ու քնքոյշ կերպով մաքրում է երեխայի բերանը, լինտերը և եթէ կան, ատամները: Երբ երեխան ուտելուց յետոյ չի քնում, լաւ կլինի այդ ժամանակ մաքրել բերանը: Առանձին ուշադրութեամբ և յաճախակի պէտք է մաքրել բերանը, երբ նրա մէջ հեղուկ է կան սպիտակ բծիկներ: Մօր ստինքները պէտք է լանալ ամեն անգամ կերակրելուց թէ առաջ և թէ յետոյ, եփ տւած և կամ բորակային ջրով:

Օ դ .

Մաքուր օդը երեխայի համար ահագին նշանակութիւն ունի: Ամեն կերպ պէտք է աշխատել, որ երեխան մաքուր օդում գտնուի: Մահճակալը, վերեփ ու կողքերից չպէտք է ծածկել վարագոյրով կամ կտաւով: Օրական, ամենապակասը 2—3 անգամ պէտք է սենեակի օդը փոխել: Տաք եղանակներին հնար եղածին չափ պէտք է պատուհանները երկար ժամանակ բաց թողնել: Երեխայի սենեակը չպէտք է փոքր լինի, որովհետև այնտեղ է գտնւելու և մայրը կամ զայեակը, հակառակ գէպքում օդը կծանրանայ:

Սենեակի շերմութեան աստիճանը պէտք է լինի 14-15-ից ոչ աւել և 13-ից ոչ պակաս: Սպիտակեղէնի բանալին ու չորացնելը պէտք է կատարել երեխայի սենեակից դուրս:

Երեխաները, թէ ձմեռը և թէ ամառը, որքան կարելի է երկար ժամանակով պէտք է գտնւին բաց օդում: Ձմեռը երեխաները բաց օդում կարող են մնալ ժամը 11-3-ը: Տաք և հանդարտ եղանակներին, նորածիններին կարելի է դուրս բերել 10-15 օրական եղած ժամանակ: Ամառուայ ընթացքում ծնւած երեխաներին ցուրտ ժամանակին էլ կարելի է դուրս բերել, երբ ցրտի աստիճանը ամէնաշատը 10-է: Ձմեռուայ ընթացքում ծնւած երեխաներին կարելի է դուրս բերել 3 ամիսը լրանալուց յետոյ, երբ ցրտի աստիճանը ամէնաշատը 5 է: Նախքան դուրս բերելը, երեխային պէտք է ընտելացնել ցրտին: Այդ նպատակով երեխային պէտք է տաք հագուստ հագցնել և պատուհանի փեղկերից մէկը բանալ: Եթէ երեխային ինչ ինչ պատճառներով չի կարելի դուրս բերել, պէտք է բաւականապէս սենեակի պատուհանը բանալով:

Անհրաժեշտ է հետևել, որ երեխաները ցուրտ եղանակներին, բաց օդում գտնւած ժամանակ, չքնեն, որովհետև այդ ժամանակ նրանք շատ զգայուն են ցրտի վերաբերմամբ:

Փոքրիկ երեխաներին պէտք է դուրս բերել պառկած դրութեամբ՝ մինչև 3-րդ ամիսը, մի քիչ թեք դրութեամբ՝ մինչև 6-րդ ամիսը, իսկ յետոյ՝ նստած:

Կեղծ վախը ցրտից.

Շատերը երեխաներին չեն դուրս բերում, վախենալով որ նա կմրսի: Այդ վախը անհիմն է

և երեխաների համար վերին աստիճանի վնասակար: Վատ է ազդում երեխաների վրայ մի միայն օդի անապասելի փոփոխութիւնը: Ներկայումս մենք զիտենք, որ հիւանդութիւնները առաջանում են այնպիսի պատճառներից, որ ոչ մի կապ չունեն մրսելու հետ: Միքանիսը կարծում են, որ մրսելը, եթէ չի առաջացնում զանազան հիւանդութիւններ, գոնէ տրամադրում է հիւանդանալու: Այդ ևս չի համապատասխանում իրականութեան: Այն երեխաները, որոնք ընտելացել են օդի շերմութեան զանազան աստիճաններին, աւելի սակաւ են հիւանդանում և աչքի են ընկնում երեսն կատարեալ առողջութեամբ:

Յաճախ, ձմեռը երեխաներին չեն լողացնում, որովհետև սենեակում այնքան էլ տաք չէ և վախենում են, որ նրանք կմրսեն: Քիչ չէ պատահում, որ վերոյիշեալ պատճառով չեն լողացնում նաև հիւանդ երեխաներին, որոնց համար մաքրութիւնը շատ կարևոր նշանակութիւն ունի:

Տաքութիւն ունեցած ժամանակ նոյնիսկ, ծծկեր երեխաներին անհրաժեշտ է ամէն օր լողացնել և կամ ամբողջ մարմինը շփել միջակ տաքութիւն ունեցող ջրում:

Ամենափոքր հասակից սկսած երեխային պէտք է վարժեցնել ցրտի և առհասարակ վատ եղանակների: Նրա համար վնասակար է փակւած ու օդը չփոխւած սենեակում գտնւելը, ում յայտնի չէ սենեակի օդում մեծացած երեխաների տեսքը: Երեխաներին ցրտի և վատ եղանակների պէտք է ընտելացնել խելացի կերպով: Անհրաժեշտ է հետևել, որ նրանք ցրտից չկապտեն ու չզոդան:

Լ Ո Յ Ա .

Յայանի է, որ լոյսը, մանաւանդ մատղաշ օրգանիզմի կանոնաւոր աճման համար, անհրաժեշտ է: Այն երեխաները, որոնք մեծացել են ներքնայարկերում և զրկւած են եղել արեգակի ճառագայթների կենսատու ազդեցութիւնից, լինում են զանգաղաշարժ, թոյլ, գունատ դէմք են ունենում: Երեխան պէտք է ենթարկուի լոյսի ազդեցութեան, հէնց ծնած օրից: Յանկալի է, որ երեխայի սենեակի պատուհանները զէպի արեգակի կողմը դարձւած լինեն: Քաղաքային կեանքի պայմաններն այս կողմից շատ անբարեյաջող են.

Բաց օդում գտնելը ամառայ ընթացքում.

Փորձերը ցոյց են տւել, որ ամառայ բաց օդում գտնելը քաղաքից դուրս լաւ ազդեցութիւն ունի երեխաների ընդհանուր աճման վրայ: Անհրաժեշտ են կազմակերպութիւններ, որոնք կարողանային ապրելու յարմարութիւններ տալ փոքր և նոյնիսկ ծծկեր երեխաներին, քաղաքում իրենց շրջապատող վնասակար պայմաններից հեռու գտնւելու նպատակով: Գիւղերում, երեխաները ամբողջ օրը բաց ու մաքուր օդի տակ են անցկացնում. այս բանին մեծ նշանակութիւն են տալիս Արեւմտքում և շատ սպառողական ու կօօպերատիւ ընկերութիւններ հնարաւորութիւն են տալիս միջակ և չքաւոր գատակարգերի երեխաներին, ամառը անցկացնելու գիւղական լաւ պայմաններում:

Երբ գիւղում անհնար է երեխաներին յարմարութիւններ տալ, քաղաքում նրանց համար պէտք է ընտրել բարձր և քիչ բնակչութիւն ու-

նեցող տեղ, զբօսապարտէզների (պարկ) և այգիների մօտ:

Այն տունը, որի մէջ ամառը պէտք է ապրեն երեխաները, ցանկալի է, որ գտնուի լայն և լաւ լուսաւորւած փողոցում: Բնակարանը պէտք է լաւ լուսաւորւած բարձր յարկերում և արևի կողմը դարձւած լինի: Մանկանոցը պէտք է շատ լաւ լուսաւորւած լինի, պատուհանները առանց վարագոյրների:

Որովհետև կշեռքը մեծ գեր է խաղում երեխայի կանոնաւոր աճումն իմանալու համար, ցանկալի է, որ բոլոր մանկանոցներում գտնուի:

Ձեւուքեան ասիւնանը չափելը.

Մեծ նշանակութիւն ունի ջերմաչափը: Երեխայի ջերմութեան աստիճանը չափելու համար, ջերմաչափը պէտք է գտնուի անուկի վրայ, թևի տակը և կամ յետանցքում:

Վերջին դէպքում երեխային պէտք է պառկեցնել աջ կողքի վրայ և վազելին և կամ որ և է իւր քսած ջերմաչափը 5 սանտիմետր երկարութեամբ մտցնել յետանցքը:

Այդ գրութեան մէջ 5 ըուպէ պէտք է մնայ: Հասկանալի է, շատ զգոցը պէտք է լինել, որ ջերմաչափը չկտորւի: Չպէտք է մոռանալ որ այս ձևով չափւած ջերմութեան աստիճանը աւելի բարձր է և պէտք է ստացւած թւից 0, 5 հանել, որպէսզի իմացուի իսկականը: Երեխաների ջերմութեան աստիճանը սովորաբար տատանւում է 36,3—37,5:

Երեխաների մահճակալների տեսակները բազմաթիւ են: Պէտք է ձեռք բերել այնպիսին, որ

կողքերից վանդակապ լինի: Օրօրօցները գործածութեան համար անպէտք են: Սաւանը պէտք է փափուկ լինի և ոչ թէ նոր ու գեւ չլապւած:

### Բարուերու վնասակարուերը.

Համարեա ամենքը սովորութիւն ունեն ծրծկեր երեխային բարուերել և զանազան կապերով սղմել: Այգպիսի գրութեան մէջ երեխան չի կարողանում ազատ և կանոնաւոր կերպով շնչել և նրա արեան շրջանառութիւնը դժւարանում է: Հարկաւոր է թողնել այդ վնասակար սովորութիւնը և երեխային պահել այսպէս ասած ծրծկիւմ, որի մէջ նա չի կարող ազատ շարժունք կատարել, բայց շնչառութիւնն ու արեան շրջանառութիւնը կանոնաւոր կլինի: Ծրարիկի մէջ տեղի մատում տեղաւորում է փոքրիկ ներքնակ (մատրացիկ):

### Երեխայի հագուսք.

Երեխայի համար իբրև հագուստ ծառայում է յետևի կողմից բաց շապիկը, որ կապեր ունի: Դրա վրայից պէտք է հագցնել, առաջից կապեր ունեցող բաճկոնակ: Երեխային աւելի մաքուր պահելու նպատակով, նրան նստեցնում են եռանկիւնաձև ծայած շորի վրայ և ցածի նեղ անկիւնը, որ սաների մէջտեղն է գտնուում, փորի վրայ տեղաւորելուց յետոյ, մնացած անկիւններն ևս մէկը միւսի յետևից վրայ են բերում առաջինի վրայ: Դրանից յետոյ փաթաթած երեխային տեղաւորում են մոմլաթի (կէտօնկա) վրայ, որի տակը պէտք է լինի ուրիշ լաթ, սաներն ու իրանը փաթաթելու համար: Այս բոլորից յետոյ

երեխային ծածկում են փոքրիկ վերմակով, որ պէտք է համապատասխանի տարւայ եզանակին: Սենեակում երեխային գլխաբաց պէտք է պահել: Երեխայի սպիտակեղէնների համար ամենից լաւ սիւթն է կաււր և զանազան բամբակէ գործւածքներ: Փլանէլը սպիտակեղէնի համար անպէտք է, որովհետև շատ է սաքացնում երեխային. դրանից կարելի է վերմակ կարել:

### Երեխայի ֆուեր.

Առողջ երեխան քնում է խոր ու լաւ քնով: Նորածինը քնում է համարեա ամբողջ օրը և գարթնում է այն ժամանակ, երբ քաղցած է: Երկրորդ կամ 3-րդ ամսական հասակում երեխան արթուն է մնում մօտաւորապէս  $1/2$  ժամ: Մինչև մէկ տարին լրանալը նա աւելի շատ քնում է, քան արթուն մնում: Եթէ երեխան վատ է քնում, նշանակում է, որ նա հիւանդ է և կամ նեղւում է որևէ պատճառից: Այսպիսի դէպքերում պէտք է անպայման պատճառը գտնել և ոչ թէ հանդատացնել օրօրելով, որ նրա վրայ շատ վատ է ազդում: Անժամանակ կերակրելը նպաստում է, ստամորստ — աղիքային հիւանդութիւնների առաջ գալուն, որից երեխան աւելի է նեղւում: Երեխան անժամանակ կերակրելուց յետոյ եթէ միքիչ հանդատանում է, դրա պատճառն այն է, որ նա ուտելու ժամանակ յոգնել է:

### Երեխայի նիչը.

Առողջ երեխան ճշալու պահանջ է զգում, երբ երկարատ և քնի ժամանակ անդօրծ է մնացել: Եթէ երեխայի առողջութիւնը կատարեալ է և

ածուսը կանոնաւոր, նրա երբեմնակի ճշարուն նշանակութիւն չպէտք է տալ: Երեխաների տեւապերամենտը դանազան է լինում. դա նկատուում է ծնւելուց յետոյ, սկզբներում: Միքանիսը բոլորովին հանգիստ են, շատ են քնում, իսկ միքանիսը, որ բոլորովին առողջ են, անհանգիստ են և յաճախակի են ճչում: Այդ դէպքերում ոչ մի միջոցով չի կարելի համոզել, որ ճիշդ առաջացել է որ և է ուրիշ պատճառից:

Երեխայի կրքութիւնը.

Երեխան, չնայած իր փոքր հասակին, կրթութեան ազդեցութեան համար մատչելի է: Յանկացած դէպքում նրան կարելի է վարժեցնել որոշ ժամանակներում կերակրելուն: Երեխան ծնողների ու շրջապատողների համար խաղալիք չպէտք է դառնայ, նրան չի կարելի անհանգստացնել, հետը երկար ժամանակ խաղալով: Որովհետև երեխան շատ լաւ հասկանում է ձայնը և նրա նրբութիւնները, հարկաւոր է նրան փողաբշել, հետը լաւ վարել:

Միքանի բնատնիքներում երեխան բնականի պէր է կատարում: **Ծնողները, համոզւած լինելով, որ երեխային չի կարելի անհանգստացնել, բարձր չեն խօսում, զրկում են իրենց նւազածութիւնից, երգեցողութիւնից և այլն: Կրթութիւնը աւելի կանոնաւոր կլինի, եթէ նա վարժւի ազմուկի, որովհետև այդ ազմուկը ոչ նրա քանք կհամոզարի և ոչ որ և է վնասակար ազդեցութիւն կունենայ:** Այն երեխաները, որոնք վարժւել են ազմուկի, աւելի հանգիստ են լինում և ուշ են զարթնում:

Սաղալիքները չպէտք է սուր ծայրեր և եզրեր ունենան կամ ներկւած լինեն զանազան ներ-

կերով, որովհետև վերջինս իր մէջ թոյն կարող է պարունակել, իսկ սուր ծայրերն ու եզրները կարող են բերանը ծակել կամ կարել: Պէտք է յիշել, որ հետաքրքրուող մանկիկը որ և է առարկայի հետ ծանօթանալու համար իսկոյն բերանն է տանում այդ առարկան: Այն փոքրիկ առարկաները, որոնց երեխան կարող է կուտալ, չպէտք է նրա ձեռքը ձգել:

Երեխայի մազերը կարելի է խուզել և եղունգները կտրել, դա վնասակար չէ, ինչպէս շատերը կարծում են:

Փորկապութիւններ.

Երեխաներից շատերը տառապում են փորկապութեամբ: Չատ մայրեր մեծ նշանակութիւն են տալիս այդ երևոյթին, կարծելով, որ վնասակար է: Իսկապէս, փորկապութիւնը սովորական երևոյթ է և առաջանում է բազմատեսակ պատճառներից: Քիչ չէ պատահում, որ բոլորովին առողջ երեխան տառապում է փորկապութեամբ: Այսպիսի դէպքերում ամենալաւ միջոցն է օքնան (կլիզմա), որ սեռինէ գործիք է և բաղկացած է երկու մասից, **դնդաձև ու երկարաձև:** Փորկապութեան ժամանակ **օքնայի բարակ մասի վրայ** որ և է իւր են քսում և մտցնում երեխայի յետանցը: **Եթէ օքնայի բարակ մասը ոսկորից է, պէտք է վրան սեռինէ խողովակ անցկացնել:**

Մինչև երեխայի մէկ տարեկան դառնալը պէտք է օգտուել  $\frac{1}{2}$  բաժակ, իսկ յետոյ մէկ բաժակ ջրով, որի տաքութիւնը բոտ Բէժմիւրի 16°—20° է: Օքնայի նոյնիսկ ամենօրեայ գործածութիւնը վնասակար չէ, որովհետև երեխաներին հեշտ է մոռացնել սալ այդ բանը:

Փորձարութիւններ.

Բոլորովին ուրիշ երևոյթ է փորձարութիւնը, զրա վրայ պէտք է լաւ ուշադրութիւն դարձնել: Եթէ մինչև 2—3 ամսական դառնալը, պատահած փորձարութիւնների ժամանակ երեխայի քաշը չի պակասում, աճումը կանոնաւոր է և ուրիշ ոչ մի հիւանդութիւն չունի նա, այդպիսի փորձարութիւնները վստահաւոր չեն:

Վարակիչ հիւանդութիւններ.

Շատերը կարծում են, որ փոքրիկ երեխաները այնքան էլ ընդունակ չեն վարակիչ հիւանդութիւններին ենթարկուելու: Թէև այդպիսի հիւանդութիւնները սակաւ են ազդում երեխաների վրայ, անուամենայնիւ չի կարելի տեսլ, որ երեխաները չեն ենթարկուում այդ հիւանդութիւններին. փոքրիկ մանուկներին նոյնպէս պէտք է պաշտպանել վերոյիշեալ հիւանդութիւններից, ինչպէս և աւելի մեծերին: Երբ ընտանիքում յայտնուում է վարակիչ հիւանդութիւն, երեխային պէտք է առանձնացնել կամ բոլորովին հեռացնել այդ բնակարանից. նրան կարելի է ուրիշ երեխայի մօտ թողնել մինչև այն ժամանակ, երբ հիւանդութիւնը կանցնի և բնակարանը կմաքուի վարակիչ թոյնից:

Ծաղիկ կտրելը.

Երբորդ կամ 4-րդ ամսում պէտք է երեխայի ծաղիկը կտրել: Համաճարակի ժամանակ ծաղիկը կարելի է կտրել ծնւելուց յետոյ առաջին շաբաթների ընթացքում: Այս անվտանգ օպերացիան

պէտք է կատարուի ամենախիստ մաքրութեան մէջ: Եթէ ծաղիկը առաջին անգամ օպերացիայից յետոյ չբռնեց, պէտք է կտրել 2-րդ և 3-րդ անգամ, մինչև մէկ տարեկան դառնալը: Ծաղիկը կտրելուց յետոյ երեխային չի կարելի լողացնել, մինչև վէրքերի լաւանալը: Լողացնելու փոխարէն կարելի է երեխայի մարմինը տաք ջրով շփել:

## Հ Ր Ա Դ Ր Ա Կ Չ Ի Ց :

Որ մանկական մահացութիւնը գիւղում սուկայի շափեր է ընդունել, ապացուցանում է ամեն օր մեր պարբերական մամուլը. ցաւալին այն է, որ ոչ մի կողմից արմատական միջոցների չեն գիմում այդ սարսափելի, չարիքի դէմ գիտակցական կռիւ մղելու համար:

Այն ինչ դա մեր ապագայի խնդիրն է: Գիւղացիութիւնը ընկած է, աղքատ, հիւանդ, ազէս ու անձար և ինչպէս կարող է նա հոգալ ապագայ սերնդի կանոնաւոր զարգացումը:

Կրկնութիւններում է ջ ընկնենք. բոլորիս յայտնի է, որ չկայ գեմստիօ, չկան գիւղական հիւանդանոցներ, չկան համապատասխան դպրոցներ, ինչ կարող է անել սակաւահող և հողազուրկ ազէս գիւղացին. բացակայում է համագործակցութեան (կօօպերացիայի) ոգին, առանձին անհատները չեն կարող մարդավայել, տանելի կեանք ոտեղծել, հասկացողութիւն չունին իրանց ոյժերով իրանց գրութիւնը բարւոքելու մասին:

Գիւղական հիւանդանոցի աւարտողը մեծ մասամբ քաղաք գրտելով, մոռանում է իր հայրենիքն ու գիւղը, աւելի մտ ընկնում է, որովհետև չի կարող իր ստացած կրթական պաշարը իր ծննդավայրում գործադրել:

Սակայն եթէ այդ ուսումնարանը, բացի ընդհանուր կրթութիւնից մատակարարէր նաև գիւղատնտեսական գիտելիքներ, գիւղում կըստեղծւէր նոր կեանք, կըլինէին միջակ գիւղատնտեսներ, որոնք անպայման հողի հետ կապւած լինելով,

կիրաբործէին գեմստօյի վեհ զաղափարը, այսինքն, ի միջի այլոց կըլինէին՝ հիւանդանոցներ, բժշկներ, համապատասխան դպրոցներ և այլ հասարակական կրթական հիմնարկութիւններ: Այդպիսով գիւղական կեանքի տնտեսական կողմը բարձրանալով, կըբուժւէր և կառողջանար հայ գիւղացիութիւնը, հետևապէս և կընազէր երեխաների մահացութիւնը:

Մեր ուսումնարաններին կից պէտք է հիմունք գիւղատնտեսական մշտական դասընթացներ:

Չմոռանանք աջակցելու Հայոց Գիւղատնտեսական Ընկերութեան:

ԲԺ. Ա. Բ.





ԲՃ. Ա. ԲՈՒՂՈՒԿԵԱՆԻ աշխատութիւնները

1. Առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը (սպառ)	5 4.
2. Վարակիչ հիւանդութիւններ	5 »
3. Ի՞նչ է սիֆիլիսը	5 »
4. Առողջապահական զրոյցներ	5 »
5. Ի՞նչ է ժուժկալութիւնը	5 »
6. Ի՞նչ է անասակութիւնը	5 »
7. Վէներական ախտեր	5 »
8. Աշակերտի առողջապահութիւն	2 »
9. Մեր նեարդերը	10 »
10. Սիֆիլիս (բարեփոխում)	10 »
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ	10 »
12. Գեղձախտ (զօլօտուխտ)	10 »
13. Ո՞վ է յանցաւորը	15 »
14. Կարիք և բարեգործութիւն	15 »
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն	15 »
16. Մանկավարժական համաձայն զրոյցներ	15 »
17. Մարմնամարզութիւն (25 պատկերով)	20 »
18. Առողջապահական նուէր նորասի կանանց	20 »
19. Կինը և աղամարդը	15 »
20. Վերաբուժական հիւանդութիւն կամ օպերացիա	5 »
21. Ի՞նչ է կաշու հիւանդութիւնը	15 »
22. Երիտասարդութիւն և ծերութիւն	15 »
23. Առողջ ու հիւանդ երեխայի օգին	20 »
24. Ուղեղի սիֆիլիսը (գլխի և սղնաչարի)	20 »
25. Ստամոքսի կատարը	20 »
26. Քուն և Երազ մի (պատկերով)	25 »
Մեծագիր պատկեր «Քուն և Երազ» տոանձին	10 »
27. Գործարանի է երկրագործութիւն	15 »
28. Մնապաշտութիւն ու կախարդութիւն	20 »
29. Մտերմական խորհուրդ պատանիներին (օնանիզմ)	20 »
30. Գոյութեան կոխ	20 »
31. Ռուզօլֆ Վիրխով	25 »
32. Մէր և խանդ (մի պատկերով)	20 »
33. Անասակութիւն և պտոնկութիւն	20 »
34. Նուէր հայ զինուորին	20 »
35. Նուէր հայ վարժապետին (զպրոցական առողջապահութիւն)	20 »
36. Նուէր հայ զպրոցականին (Մեր օրերը)	10 »
37. Աւթ ժամեայ բանւորական օր (մի պատկեր)	10 »
38. Ժողովրդական առողջապահութիւն (հիւանդացուսման ցուցակ)	10 »
39. Երկու խօսք գիւղացուն	10 »
40. Սով (մի պատկերով)	10 »
41. Ինչպէս հիմնել գիւղամտեսական ընկերութիւն	10 »
42. Գարտղ	10 »
43. Սպառողի հաւատամքը	10 »
44. Ուղեցոյց գիւղացի կօօպերատրին	10 »
45. Ծճկեր երեխան	20 »

Պանեսը գտնուում է Տիփիսում. «Գիւլասնեսի» խմբագրատանը, որին նւիրատուած:

« Ազգային գրադարան



NL0262960

2278

